ICMPD
International Centre for Migration Policy Development

RRF
RETURN AND REINTEGRATION FACILITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՐՈՖԻԼ

2018-2021 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 4

ԲԱԺԻՆ Ա. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018-2021ԹԹ 5

Միգրացիոն գործընթացների ընդհանուր նկարագիր 5

Միգրացիոն գործընթացների վրա ազդող առանցքային իրադարձությունների համառոտ ակնարկ 5

2018-2021թթ. ամփոփ միգրացիոն պատկեր 6

Իմիգրացիա 10

Օտարերկրացիներին տրամադրված վիզաներ 10

Հայաստանում բնակվող օտարերկրացիներ 12

Քաղաքացիություն և ապաքաղաքացիություն 18

Միջազգային պաշտպանության տրամադրում 21

Անօրինական իմիգրացիա 24

Էմիգրացիա 25

Էմիգրացիոն հոսքերի ծավալները, աշխարհագրությունն ու որոշ առանձնահատկություններ 25

Արտերկրում ապաստանի հայց ներկայացրած հհ քաղաքացիները 31

Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կանխարգելում 32

Վերադարձ եվ վերաինտեգրում 33

Հայաստան վերադարձի միտումները 33

Հետընդունում (ռեադմիսիա) 34

Վերաինտեգրում 36

Ղարաբաղյան առաջին պատերազմ (1988-1994թթ.) 38

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեվանքով բռնի տեղահանված անձանց եվ փախստականների հիմնախնդիրները 38

44-օրյա պատերազմ (2020թ.) 39

Մարդկանց թրաֆիքինգ 40

ԲԱԺԻՆ Բ. ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 43

Դրամական փոխանցումներ 43

Դրամական փոխանցումների ծավալներն ու ազդեցությունը 43

Սփյուռքի ներուժի օգտագործում 45

ԲԱԺԻՆ Գ. ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 47

Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը 47

Ինստիտուցիոնալ կառուցվածքը 2022թ. Հունվարի 1-ի դրությամբ 47

Ինստիտուցիոնալ կառուցվածքի ակնկալվող փոփոխությունները 48

Միգրացիոն քաղաքականություն 49

Միգրացիոն քաղաքականության 2018-2021թթ. Նշանակալի զարգացումները 49

Մշակման կամ հաստատման փուլում գտնվող քաղաքականության փաստաթղթերը 53

Օրենսդրական դաշտի բարեփոխումներ 54

Միգրացիայի ոլորտում միջազգային համագործակցությունը 55

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլը (ԸՄՊ) վերլուծական զեկույց է, որում ամփոփվում են միգրացիոն գործընթացների վերաբերյալ ՀՀ և օտարերկրյա պետությունների վարչական վիճակագրությունը, տեղական և միջազգային կազմակերպությունների բաց տվյալներն ու վերլուծությունները:

ԸՄՊ-ն նպատակ ունի քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և միգրացիայի ոլորտով հետաքրքրված այլ մասնագետներին բազմակողմանի և համապարփակ տեղեկատվություն տրամադրել միգրացիոն միտումների, ինչպես նաև միգրացիոն օրենսդրության և քաղաքականության նշանակալի զարգացումների մասին:

2018-2021թթ. ժամանակահատվածին վերաբերող սույն զեկույցը Հայաստանի Հանրապետության երկրորդ ԸՄՊ-ն է (առաջին ԸՄՊ-ն, որում արտացոլված են 2013-2017թթ. միգրացիոն միտումները, հասանելի է այստեղ): Զեկույցը պատրաստվել է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) կողմից իրականացվող “Return and Reintegration Facility” ծրագրի աջակցությամբ, որի համար ՀՀ միգրացիոն ծառայությունն իր շնորհակալությունն է հայտնում:

2018-2021թթ. ԸՄՊ-ն մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն ծառայության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի տրամադրած տվյալների և պարզաբանումների, Եվրոստատի, ՌԴ ներքին գործերի նախարարության, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի բաց տվյալների, ինչպես նաև մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների հաշվետվությունների և վերլուծությունների հիման վրա:

Սույն զեկույցը բաղկացած է երեք հիմնական բաժիններից.

Միգրացիոն գործընթացները Հայաստանի Հանրապետությունում 2018-2021թթ., որտեղ ներկայացվում են միգրացիոն միտումները, միգրացիոն գործընթացների վրա ազդող նշանակալի իրադարձությունները, իմիգրացիայի, էմիգրացիայի և վերադարձի վիճակագրությունը,

Միգրացիա և զարգացում, որտեղ վերլուծվում են արտերկրից ստացված դրամական փոխանցումների, ինչպես նաև հայկական սփյուռքի ներուժի՝ հանուն զարգացման օգտագործելու հնարավորությունները,

Միգրացիայի կառավարման համակարգը, որտեղ քննարկվում են միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը, միգրացիոն քաղաքականության նշանակալի զարգացումները, միգրացիոն օրենսդրության բարեփոխումները և միգրացիայի բնագավառում միջազգային համագործակցությունը:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտոնական անվանումը	**Հայաստանի Հանրապետություն (ՀՀ), կարճ՝ Հայաստան**
Դրոշը	
Տարածքը	29,743 քառ. կմ
Մայրաքաղաքը	**Երևան**
Պետական սահման	Հյուսիսում՝ Վրաստանի հետ, արևելքում ՝ Ադրբեջանի հետ, արևմուտքում և հարավ-արևմուտքում ՝ Թուրքիայի հետ, հարավում՝ Իրանի հետ
Պետական լեզու	Հայերեն
Բնակչությունը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,961,400**
Էթնիկ կազմ	Հայեր (98,1%), եզդիներ, ռուսներ, ասորիներ, ուկրաինացիներ, քրդեր, հույներ, հրեաներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ
Ազգային արժույթ	ՀՀ դրամ
ՀՆԱ 2021թ.	**6,982,962.**5 միլիոն ՀՀ դրամ (13.9 միլիարդ ԱՄՆ դոլար)

ԲԱԺԻՆ Ա.

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018-2021ԹԹ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Մի շարք ճգնաժամային իրավիճակների բերումով (1988թ.-ի աղետալի երկրաշարժ, ղարաբաղյան առաջին պատերազմ, ԽՍՀՄ փլուզում, տրանսպորտային և էներգետիկ շրջափակում, սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացում) նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին տարիները նշանավորվեցին բնակչության զանգվածային արտագաղթով, որի արդյունքում, ըստ փորձագիտական գնահատականների, 1992-1995թթ. երկրից հեռացավ ավելի քան 600,000 մարդ կամ բնակչության մոտ 17%-ը:

Ղարաբաղյան առաջին պատերազմում զինադադարի կնքումը ու սոցիալ-տնտեսական իրավիճակի հետագա կայունացումը 1995թ.-ից սկսած բերեցին էմիգրացիայի տեմպի և միգրացիայի բացասական մնացորդի զգալի նվազմանը: Թեև Հայաստանը շարունակեց լինել գերազանցապես միգրացիոն հոսքերի ծագման երկիր, էմիգրանտների կազմում սկսեցին գերակշռել ժամանակավոր աշխատանքային միգրանտները (ինչպես կարճատև (սեզոնային), այնպես էլ տևական (անորոշ) ժամկետով աշխատանքի նպատակով ուղևորություններ կատարողները), միտում, որն ըստ տարբեր հետազոտությունների տվյալների պահպանվում է մինչ օրս:

2018-2021թթ. ժամանակահատվածը նշանավորվեց մի շարք առանցքային իրադարձություններով, որոնք էական ազդեցություն ունեցան միգրացիոն իրավիճակի վրա: Դատելով միգրացիոն վիճակագրությունից, 2018թ.-ի՝ ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության և ազատ մրցակցության հանձնառություններով իրականացված **«թավշյա հեղափոխությունը»** զգալիորեն ավելացրեց Հայաստանի գրավչությունը թե՛ օտարերկրացիների, թե՛ ավանդաբար արտերկրում աշխատանք փնտրող ՀՀ քաղաքացիների համար: 2018թ.-ին՝ 2006թ.-ից ի վեր առաջին անգամ դրական էր սահմանահատումների հաշվեկշիռը, ընդ որում օտարերկրացիների սահմանահատումների դրական հաշվեկշիռը 2017թ.-ի համեմատ կրկնապատկվել էր, իսկ ՀՀ քաղաքացիներինը, թեև բացասական էր, 2017թ.-ի համեմատ բարելավվել էր շուրջ 8 անգամ: Զգալիորեն կրճատվեց նաև միգրացիայի բացասական մնացորդը, ընդ որում միգրացիոն ցուցանիշների դրական դինամիկան պահպանվեց նաև 2019թ.-ին:

Սահմանահատումների հաշվեկշիռը (սալդո) Հայաստանի բոլոր սահմանային անցակետերում գրանցված մուտքերի և ելքերի տարբերությունն է, ներառյալ օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների հոսքերը, անկախ ուղևորության տևողությունից և նպատակից:

Միգրացիայի մնացորդը էմիգրանտների և իմիգրանտների տարբերությունն է (ըստ ՄԱԿ-ի սահմանումների), որը 2013թ.-ից սկսած հաշվարկվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներով:

Դրական սպասումներ ձևավորած 2018-2019թթ-ին փոխարինելու եկավ ճգնաժամային 2020թ-ը, երբ բացի համաշխարհային հանրության համար մարտահրավեր դարձած **ՔՈՎԻԴ-19 համավարակից**, Հայաստանը բախվեց սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողություններին դիմակայելու և **44-օրյա պատերազմի** հետևանքներին արձագանքելու անհրաժեշտությանը: ՔՈՎԻԴ-19-ի բերումով սահմանված միջազգային տեղաշարժի սահմանափակումների բերումով անկախությունից ի վեր 2020թ.-ին առաջին անգամ միգրացիայի մնացորդը Հայաստանում դրական էր: Միաժամանակ, 44-օրյա պատերազմը հանգեցրեց Արցախից հարկադիր տեղահանվածների ներհոսքի, որը մեծապես ազդեց 2020-2021թթ.-ի միգրացիոն քաղաքականության առաջնահերթությունների վրա:

2018-2021ԹԹ. ԱՄՓՈՓ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԱՏԿԵՐ

Սահմանահատումներ

Ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով 2012-2021թթ. ժամանակահատվածի համար ստացված տվյալների, ՀՀ բոլոր սահմանային կետերով ուղևորահոսքը (թե՛ մուտքերը, և թե՛ ելքերը) 2012-2019թթ. ժամանակահատվածում աճի միտում է ունեցել: Ընդ որում աճի տեմպը զգալիորեն արագացել է 2017-2019 թվականներին, իսկ 2018թ.-ին՝ 2006թ.-ից ի վեր առաջին անգամ մուտքերի և ելքերի սալդոն դրական էր՝ միտում, որը պահպանվել է նաև 2019-2020 թվականներին:

ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված, սահմանահատումների թիվը 2020թ.-ին գրեթե հինգ անգամ նվազել է, իսկ 2021թ.-ին ճամփորդական սահմանափակումների վերացմանը զուգընթաց կրկին սկսել է աճել, հասնելով սակայն 2019թ.-ի ցուցանիշների ընդամենը մոտ 38%-ի մակարդակին: Միաժամանակ, 2021թ.-ին ՀՀ սահմանային հսկողության կետերով մուտքերի և ելքերի սալդոն կազմել է շուրջ -44,000:

Սահմանահատումների տարեկան թվի դինամիկան 2012-2021թթ., հազար մարդ



ՀՀ միգրացիոն ծառայություն

Շեշտելով, որ խոսքն այստեղ գնում է բացառապես սահմանահատումների, այլ ոչ միգրացիոն հոսքերի մասին, այդուհանդերձ կարելի է ենթադրել, որ 2021թ.-ի բացասական սալդոն մեծապես պայմանավորված էր ՔՈՎԻԴ-19-ի բերած իրողություններով (ինչպես օրինակ՝ Հայաստան ժամանակավորապես այցելած և 2020թ.-ին Հայաստանից մեկնել չկարողացած անձանց վերադարձն իրենց մշտական բնակության երկրներ, հայաստանցի սեզոնային միգրանտների արտահոսքը, ովքեր 2020թ.-ին չէին կարողացել մեկնել արտագնա աշխատանքի, և այլն), ինչպես նաև 2020թ.-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի և 2021թ.-ին շարունակվող ագրեսիայի հետևանքով Հայաստանի անվտանգային միջավայրի վատթարացմամբ: Միաժամանակ, հատկանշական է, որ վերջին տասնամյակում բոլոր տարիներին՝ բացառությամբ 2020թ.-ի, օտարերկրացիների մուտքերի և ելքերի տարբերությունը դրական է եղել, իսկ ՀՀ քաղաքացիներինը՝ բացասական, թեև 2018թ.-ին երկու ցուցանիշներն էլ կտրուկ բարելավվել են (համապատասխանաբար՝ 2.1 և 7.9 անգամ):

Սահմանահատումների սալդոն 2012-2021թթ. ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիոն ծառայություն

Միգրացիոն հոսքերի ծավալներ և միգրացիայի մնացորդ

ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներով 2018-2021թթ. Հայաստանն ընդունել է միջինում տարեկան 10,780 իմիգրանտ, իսկ նույն ժամանակահատվածում Հայաստանից

արտերկիր է մեկնել միջինում տարեկան 19,380 էմիգրանտ, ընդ որում գնահատականները ներառում են թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ միգրանտներին:

ՏՏԿԱՀ-ում օգտագործված սահմանումներ

Երկարաժամկետ միգրանտ - անձը, ով իր մշտական (սովորաբար) բնակության երկրից տեղաշարժվում է մեկ այլ երկիր՝ առնվազն մեկ տարի (12 ամիս) ժամկետով, այսինքն, նշանակետ երկիրը նրա համար դառնում է նոր մշտական բնակության երկիր: Մեկնման երկրի տեսանկյունից՝ մեկնող անձը համարվում է երկարաժամկետ արտագաղթող (էմիգրանտ), իսկ ժամանման երկրի համար՝ տվյալ անձը համարվում է երկարաժամկետ ներգաղթող (իմիգրանտ):

Կարճաժամկետ միգրանտ - անձը, ով իր մշտական (սովորաբար) բնակության երկրից տեղաշաժվում է մեկ այլ երկիր՝ առնվազն 3 ամիս, բայց մեկ տարուց (12 ամիս) պակաս ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղաշարժը հանգստի, արձակուրդի, ընկերներին եւ մտերիմներին այցելությունների, գործուղման, բուժման կամ կրոնական ուխտագնացության նպատակով է: Միջազգային միգրացիայի վիճակագրության տեսանկյունից, կարճաժամկետ միգրանտների մշտական բնակության երկիրը՝ այնտեղ գտնվելու ժամանակաընթացքում, կհամարվի նշանակման երկիրը:

ՏՏԿԱՀ արդյունքների համաձայն, միգրացիայի մնացորդը 2016թ.-ին գրանցելով վերջին տասնամյակի ամենացածր նիշը (-24,900)՝ 2017թ.-ից սկսել է աճել: Միաժամանակ, եթե 2017թ.-ին 2016թ.-ի համեմատ ցուցանիշը բարելավել է ընդամենը 4%-ով, ապա 2018թ.-ին նախորդ տարվա համեմատ 24%-ով, իսկ 2019թ.-ին՝ ևս 16%-ով: 2020թ.-ին, մեծապես պայմանավորված ՔՈՎԻԴ-19 համավարակով, միգրացիայի մնացորդը վերջին տասը տարիներին առաջին անգամ դրական է եղել, ու թեև կրկին նվազել է սահմանափակումների վերացմանը զուգահեռ, 2021թ.-ի ցուցանիշը 2017թ.-ի համեմատ բարձր էր շուրջ 6 անգամ:

Միջպետական միգրացիան 2016-2021թթ.



Գնահատված ՀՀ վիճակագրական կոմիտեի ՏՏԿԱՀ-ի արդյունքների հիման վրա

Միգրանտների ժողովրդագրական կազմը

Միջազգային միգրանտների որոշ ժողովրդագրական բնութագրիչների մասին ընդհանուր պատկերացում է տալիս 2021թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա ՀՀ վիճակագրական կոմիտեի կատարած վերլուծությունը, որը վերաբերում է 2019-2021թթ. ժամանակահատվածին և հիմնված է ՏՏԿԱՀ-ի տվյալների վրա (Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2022, մաս 7: Միգրացիա):

Ըստ հետազոտության արդյունքների, 2019-2021թթ. միջակայքում 3 ամիս և ավելի տևողությամբ ՀՀ-ից արտերկիր մեկնած և 2021թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած միգրանտների համաթվում կանայք կազմել են ընդամենը 10.8%, մինչդեռ վերադարձած միգրանտների շրջանում՝ 20.3%, իսկ նոր ժամանածների շրջանում՝ 62.2%: Վերլուծությունը փաստում է նաև, որ 15-49 տարեկան են չվերադարձածների շուրջ 80%-ը, մինչդեռ վերադարձածների՝ շուրջ 70, իսկ նոր ժամանածների ընդամենը 50%-ը: Այս տվյալները փաստում են, որ թեև Հայաստանի բնակչության թվաքանակի վրա միգրացիոն գործընթացների բացասական ազդեցությունը վերջին տարիներին որոշակիորեն մեղմվել է, սեռատարիքային կազմի վրա ազդեցությունը շարունակում է պահպանվել:

2019-2021թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված անձանց բաշխումն ըստ սեռի



ՏՏԿԱՀ

Քաղաքային և գյուղական միգրացիայի առումով, ըստ հետազոտության տվյալների, պահպանվել է նախորդ ժամանակահատվածի միտումը, երբ մեկնած և չվերադարձածների մեծ մասը գյուղական համայնքներից է, իսկ վերադարձողների և առավել ևս՝ նոր ժամանողների մեծ մասը հանգրվանել է քաղաքային համայնքներում:

2019-2021թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված անձանց բաշխումն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի



ՏՏԿԱՀ

ԻՄԻԳՐԱՑԻԱ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԻԶԱՆԵՐ

Հայաստանի Հանրապետության մուտքի վիզաները տրվում են ՀՀ-ում մինչև 21 օր կամ մինչև 120 օր գտնվելու ժամկետով՝ առավելագույնը մինչև 60 օր ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ, եթե օրենքով կամ ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Արտաքին գործերի նախարարությունը տրամադրում և երկարաձգում է «պաշտոնական» և «դիվանագիտական» մուտքի վիզաները, ինչպես նաև տրամադրում է էլեկտրոնային մուտքի վիզաներ՝ E-visa համակարգով: «Այցելության» և «տարանցիկ» մուտքի վիզաները տրամադրում և երկարաձգում է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը:

57 երկրների քաղաքացիներ ՀՀ մուտքի արտոնագիր կարող են ստանալ միայն օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում՝ **միայն հրավերի հիման վրա**:

44 երկրների քաղաքացիներ (այդ թվում՝ եմ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավտրալիա, Նոր Զելանդիա, Ճապոնիա, Կորեայի Հանրապետություն, Սինգապուր, Միացյալ Արաբական Էմիրություններ, ամբողջական ցանկը՝ այստեղ) **միակողմանիորեն ազատված են ՀՀ մուտքի վիզա ձեռք բերելու պահանջից**:

Փոխադարձության սկզբունքով ՀՀ մուտքի վիզա ձեռք բերելու պահանջից ազատված են հետևյալ 20 պետությունների բոլոր տեսակի վավեր անձնագրեր ունեցող քաղաքացիները.

- Ալբանիա
- Արգենտինա
- Բելառուս
- Բրազիլիա
- Իրան
- ՉԺՀ հոնկոնգի հատուկ վարչական շրջան
- Ղազախստան
- Ղրղզստան
- Մակաո/ՉԺՀ մակաոյի հատուկ վարչական տարածք
- Մոլդովա
- Չինաստան
- Ռուսաստան
- Սերբիա
- Վրաստան
- Տաջիկստան
- Ուզբեկստան
- Ուկրաինա
- Ուրուգվայ
- Կատար
- Էկվադոր

Այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է ՀՀ ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, ՀՀ տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ ժամկետ սահմանված չէ:

2018-2021թթ. ընթացքում օտարերկրացիներին տրամադրվել է ՀՀ մուտքի 384,106 արտոնագիր, որոնց 54.4%-ը տրամադրվել է ՀՀ սահմանին՝ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կողմից, 33.5%-ը տրամադրվել է ԱԳՆ-ի E-visa համակարգով, իսկ 12.1%-ը տրամադրել են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններն ու հյուպատոսությունները:

Օտարերկրացիներին տրամադրված մուտքի արտոնագրերի թվի դինամիկան



ՀՀ ոստիկանության ԱՎՎ, ՀՀ ԱԳՆ

2018թ.-ի հետ համեմատ 2019թ.-ին 11.2%-ով աճելուց հետո, 2020թ.-ին, ՔՈՎԻԴ-19 համավարակի և 44-օրյա պատերազմի բերումով, օտարերկրացիներին տրամադրված վիզաների թիվը շուրջ 6.4 անգամ նվազել է: 2021թ.-ին, ճամփորդական սահմանափակումների վերացմանը զուգընթաց, տրամադրված մուտքի արտոնագրերի թիվը կրկին աճել է, հասնելով շուրջ 66,000-ի:

Թեև սա նախաճգնաժամային ժամանակահատվածի համեմատ 2.7 անգամ փոքր ցուցանիշ է, հարկ է նշել, որ իրավիճակը մեծապես պայմանավորված է որոշ երկրների հետ վիզաների դյուրացման կամ վիզային ռեժիմի վերացման համաձայնագրերի գործարկմամբ: Այսպես, 2018-2021թթ. ՀՀ մուտքի վիզայի ձեռքբերման պահանջից ազատվել են Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Սինգապուրի, Հարավային Կորեայի, Ալբանիայի, Չինաստանի, Հոնգկոնգի, Սերբիայի և Դոմինիկայի քաղաքացիները:

2018-2021թթ. ամենամեծ թվով մուտքի արտոնագրեր տրամադրվել են Հնդկաստանի քաղաքացիներին: Քաղաքացիներին տրամադրված արտոնագրերի թվով առաջին հնգյակում են նաև Ֆիլիպինները, Թուրքիան, Լիբանանն ու Չինաստանը:

Օտարերկրացիներին տրամադրված մուտքի արտոնագրերն ըստ քաղաքացիության երկրների

Քաղաքացիություն	2018	2019	2020	2021	Ընդամենը
Հնդկաստան	37,131	40,469	3,379	30,030	**111,009**
Ֆիլիպիններ	20,483	20,514	5,483	5,674	**52,154**
Թուրքիա	12,751	12,268	5,225	4,690	**34,934**
Լիբանան	10,701	11,302	1,890	4,494	**28,387**
Չինաստան	9,065	15,602	274	5	**24,946**
Թուրքմենստան	10,315	10,748	308	121	**21,492**
Կանադա	5,845	6,981	645	2,391	**15,862**
Իսրայել	6,190	6,955	474	2,148	**15,767**
Իրաք	4,633	5,111	447	5,226	**15,417**
Սիրիա	2,884	2,794	642	1,545	**7,865**
Հորդանան	1,847	1,930	304	1,173	**5,254**
Այլ երկրներ	17185	19983	5097	8754	**51019**
Ընդամենը	**139,030**	**154,657**	**24168**	**66,251**	**384,106**

ՀՀ ոստիկանության ԱՎՎ, ՀՀ ԱԳՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

Օտարերկրացիների կացության կարգավիճակներն ըստ ՀՀ օրենսդրության

Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի կետ 1-ի օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները. ա) ժամանակավոր, բ) մշտական, և գ) հատուկ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

- Ուսումը
- Աշխատանքի թույլտվության առկայությունը
- ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը
- ՀՀ-ում քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը
- ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը
- Ազգությամբ հայ լինելը
- Օրենքով սահմանված այլ դեպքեր

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

- Ապացուցում է Հայաստանում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն առնվազն երեք տարի բնակվել է ՀՀ-ում
- ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը
- Ազգությամբ հայ լինելը

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:

Հատուկ կացության կարգավիճակը շնորհվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կարգադրությամբ ծագումով հայ օտարերկրացիներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: **Այն տրվում է տասը տարի ժամկետով:**

Նրանց, ում շնորհվում է հատուկ կացության կարգավիճակ, տրվում է Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, որով կարելի է ազատ մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածք և բնակվել այնտեղ առանց մուտքի վիզայի: Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, բացառությամբ ընտրական իրավունքի: Նրանց վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայելու պարտականությունը:

Կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիներ

Եթե 2015-2017թթ. արդեն արձանագրվում էր Հայաստանում կացության կարգավիճակ ստացող օտարերկրացիների շարունակական, թեև՝ փոքր տարեկան աճ (4% աճ 2016թ.-ին, և 2% աճ 2017թ.-ին), 2018թ.-ին կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը կտրուկ աճել է՝ հասնելով 8,330-ի, 2017թ.-ի նույն ցուցանիշը գերազանցելով շուրջ 37%-ով:

Միաժամանակ, 2019թ.-ից սկսած կացություն ստացող օտարերկրացիների թիվը նվազման միտում է ունեցել՝ 2021թ.-ին հասնելով 4,191-ի (2018թ.-ի համեմատ նվազելով շուրջ 50%-ով): Նվազումն առավել նկատելի է եղել ժամանակավոր և հատուկ կացության կարգավիճակներ ստացողների պարագայում: Միաժամանակ, մշտական կարգավիճակ ստացող օտարերկրացիների թիվը շարունակել է աճել 2019-2020թթ., այնուհետև կտրուկ նվազել 2021թ.-ին՝ վերադառնալով 2017թ.-ի ցուցանիշին:

ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ կարգավիճակի տեսակի



ՀՀ միգրացիոն ծառայություն

2018-2021թթ. ընթացքում ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացածների կեսից ավելին եղել են Հնդկաստանի և Իրանի քաղաքացիներ, մշտական կացության կարգավիճակ ստացածների մեծամասնությունը՝ Ռուսաստանի Դաշնության և Իրանի քաղաքացիներ: Հատուկ կացության կարգավիճակ է շնորհվել հիմնականում Սիրիայի, Իրանի, Իրաքի և ԱՄՆ-ի քաղաքացիներին:

2021թ. -ի տարեվերջի դրությամբ վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներ

2021թ.-ի տարեվերջի դրությամբ ՀՀ-ում վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը կազմել է 19,337 մարդ (կամ երկրի բնակչության 0.65%-ը)՝ 16%-ով գերազանցելով 2019թ. տարեվերջի և 22%-ով՝ 2019թ.-ի տարեվերջի ցուցանիշը:

ՀՀ-ում վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները տարեվերջի դրությամբ



ՀՀ միգրացիոն ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներ

Ինչպես 2019թ., այնպես էլ 2021թ.-ի վերջի դրությամբ ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների մեծամասնությունը կարգավիճակը ստացել է Հայաստանում ուսանելու հիմքով:

Տարեվերջի դրությամբ վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը (%)՝ ըստ կարգավիճակի հիմքի



ՀՀ միգրացիոն ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

2021թ.-ի վերջի դրությամբ վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թվում ամենամեծ կշիռներն են ունեցել Հնդկաստանի և Իրանի քաղաքացիները:

2021թ. տարեվերջի դրությամբ վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը (%)՝ ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիոն ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներ

2021թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում վավեր մշտական կացության կարգավիճակ ունեցող 8380 օտարերկրացիների մեծամասնությունը (66%) կարգավիճակը ստացել է ազգությամբ հայ լինելու հիմքով: Թեև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմքով շնորհված մշտական կացության կարգավիճակ ունեցողները փոքրամասնություն են կազմում, 2019թ.-ի համեմատ այս հիմքով կարգավիճակը ստացած և 2021թ.-ի տարեվերջին վավեր կարգավիճակ ունեցող օտարերկրացիների մասնաբաժինն ավելացել է շուրջ 2.5 անգամ:

Տարեվերջի դրությամբ վավեր մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը (%)՝ ըստ կարգավիճակի հիմքի



ՀՀ միգրացիոն ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

2021թ. տարեվերջի դրությամբ վավեր մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների կեսից ավելին Ռուսաստանի քաղաքացիներ էին:

ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիոն ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներ

2018-2021թթ. ընթացքում հատուկ կացության կարգավիճակ շնորհվել է ընդհանուր առմամբ 2,042 օտարերկրացու: 2021թ.-ի տարեվերջի դրությամբ ՀՀ-ում հատուկ կացության կարգավիճակ ուներ 5,279 օտարերկրացի, որոնց 99.2%-ին կարգավիճակը շնորհվել էր ազգությամբ հայ լինելու հիմքով, և միայն 44 օտարերկրացի կարգավիճակը ստացել էր տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալելու հիմքով:

Ինչպես 2019թ.-ի, այնպես էլ 2021թ.-ի տարեվերջի դրությամբ վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների մեծամասնությունը Սիրիայի և Իրանի քաղաքացիներ էին:

2021թ. տարեվերջի դրությամբ վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը (%)՝ ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիոն ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Հայաստանում ուսանող օտարերկրացիներ

2018-2021թթ. Հայաստանում ուսում ստացող օտարերկրացիների թիվն աճի միտում է ունեցել: 2021-2022թթ. ուսումնական տարում ՀՀ պետական և մասնավոր հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատություններում ուսանել է ընդհանուր առմամբ 6,775 օտարերկրացի, ինչը 33%-ով գերազանցում է 2018-2019թթ. ուսումնական տարվա ցուցանիշը:

ՀՀ-ում ուսում ստացող օտարերկրացիների թվի դինամիկան



ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե

Հայաստանի **հանրակրթական** ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրացիների թվում ինչպես 2018-2019թթ, այնպես էլ 2021-2022թթ ուսումնական տարիներին գերակշռել են Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի և Ուկրաինայի քաղաքացիները:

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսանող օտարերկրացիներն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսում ստացողների թվում Ռուսաստանի և Վրաստանի քաղաքացիները կազմել են օտարերկրացիների ընդհանուր թվի երեք քառորդից ավելին, ընդ որում Ռուսաստանի քաղաքացիություն ունեցողների մասնաբաժինը 2018-2021թթ. զգալիորեն աճել է, իսկ Վրաստանի քաղաքացիություն ունեցողներինը՝ նվազել:

ՀՀ միջին մասնագիտական կրթական հաստատություններում ուսանող օտարերկրացիներն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե

Բարձրագույն կրթության ոլորտում պատկերն այլ է: Օտարեկրացի ուսանողների ամենամեծ ներհոսքը Հնդկաստանից է, ընդ որում 2018-2019թթ ուսումնական տարվա համեմատ 2021-2022թթ ուսումնական տարում Հնդկաստանի քաղաքացիների մասնաբաժինը ՀՀ բուհերում սովորող օտարերկրացիների ընդհանուր թվում աճել է 7 տոկոսային կետով:

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրացիներն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ և ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը

Համաձայն ՀՀ քաղաքացիության մասին օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, եթե նա օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ է ՀՀ սահմանադրությանը:

Նույն օրենքի համաձայն, պարզեցված կարգով՝ առանց վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը,

- ✓ որն ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա,
- ✓ որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար,
- ✓ որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ,
- ✓ որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց կարող է շնորհվել ՀՀ քաղաքացիություն առանց վերը նշված բոլոր պահանջների:

ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է ՀՀ քաղաքացիությունը փոխելու, ՀՀ քաղաքացիությունից զրկվելու, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

- ✓ նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում,
- ✓ նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ,
- ✓ ՀՀ քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է ՀՀ ազգային անվտանգության շահերին,
- ✓ նա ունի պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ:

Անձը ՀՀ քաղաքացիությունից կարող է զրկվել, եթե նա՝

- ✓ մշտապես բնակվելով արտասահմանում, յոթ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չի կանգնել,
- ✓ ՀՀ քաղաքացիությունը ձեռք է բերել կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա,

✓ ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն:

ՀՀ քաղաքացիություն ստանալու և քաղաքացիության դադարեցման հարցերը լուծվում են ՀՀ նախագահի հրամանագրերով:

ՀՀ քաղաքացիություն ստացած օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիությունը դադարեցրած անձանց թվի դինամիկան

2018-2021թթ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն է շնորհվել 41,422 օտարերկրացու: Նույն ժամանակահատվածում 22,053 ՀՀ քաղաքացու քաղաքացիությունը դադարեցվել է: Թե՛ քաղաքացիություն ստացած, և թե՛ քաղաքացիությունը դադարեցրած անձանց թիվը 2018-2019թթ. ժամանակահատվածում աճել է, այնուհետև 2020-2021թթ. ժամանակահատվածում՝ նվազել:

ՀՀ քաղաքացիություն ստացած և
ՀՀ քաղաքացիությունը դադարեցրած անձանց թվի դինամիկան



ՀՀ ոստիկանության ԱՎԿ

Երկքաղաքացիություն

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն:

ՀՀ երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի: ՀՀ երկքաղաքացին ունի ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է այդ մասին ՀՀ կառավարության սահմանած կարգով մեկամսյա ժամկետում հայտնել ՀՀ կառավարության լիազոր մարմնին, և օրենքի այս պահանջի խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

2018-2021թթ. ընթացքում ՀՀ երկքաղաքացիների թիվը շարունակաբար աճել է՝ 2018թ.-ի 113,449-ից 2021թ.-ին հասնելով 141,433-ի, այսպիսով արձանագրելով շուրջ 25% աճ:

Տարեվերջի դրությամբ ՀՀ երկքաղաքացիություն ունեցող անձանց թվի դինամիկան



ՀՀ ոստիկանության ԱՎԿ

2021թ.-ի վերջի դրությամբ ՀՀ երկքաղաքացիների ճնշող մեծամասնությունը բացի ՀՀ քաղաքացիությունից ունեցել է Վրաստանի (27%), Ռուսաստանի (22%), Սիրիայի (17%) կամ Լիբանանի (17%) քաղաքացիություն:

Քաղաքացիության չունեցող անձինք

Հայաստանի կամ որևէ այլ երկրի քաղաքացի չհանդիսացող ցանկացած անձ կարող է դիմել Հայաստանում ապաքաղաքացիության կարգավիճակ ստանալու համար: Դրական որոշման դեպքում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը դիմումատուին տրամադրում է քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական:

Քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական ունեցողների թիվը 2018-2021թթ. ընթացքում աճել է գրեթե 70%-ով՝ 2021թ.-ի տարեվերջին հասնելով 786-ի:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ քաղաքացիները հաճախ դիմում էին քաղաքացիությունը դադարեցնելու համար՝ ներկայացնելով օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված գրավոր հավաստում, սակայն ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո, տարբեր հանգամանքներով պայմանավորված, ձեռք չէին բերում այն պետության քաղաքացիությունը, որը տրամադրել էր հավաստումը և փաստացի հայտնվում էին քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակում: Այս կատեգորիայի անձինք, մնալով առանց վավեր անձը հաստատող փաստաթղթի, հնարավորություն չէին ունենում իրացնել իրենց իրավունքները և հարկադրված դիմում էին ՀՀ ոստիկանության ԱՎԿ՝ քաղաքացիություն չունեցող անձի վկայական ստանալու համար: Արդյունքում արհեստականորեն աճում էր քաղաքացիություն չունեցող անձանց թիվը:

Քաղաքացիություն չունեցող անձանց թվի դինամիկան



ՀՀ ոստիկանության ԱՎԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հայաստանում օտարերկրացիների միջազգային պաշտպանությունը կարգավորող օրենսդրական դաշտը

Հայաստանը, հիմնվելով համընդհանուր ճանաչում ստացած մարդու իրավունքների, միջազգայնորեն ընդունված նորմերի և ազգային օրենսդրության վրա, ապաստան (պաշտպանություն) է տրամադրում բոլոր այն օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք հետապնդումների պատճառով ստիպված են եղել լքել իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիրը: Այդ հետապնդումները, ինչպես նաև այդպիսի հետապնդումների ենթարկվելու ողջամիտ հնարավորությունը, կարող են լուրջ սպառնալիք լինել նշված անձանց կյանքի և ազատությունների համար:

Իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրում որոշակի պատճառներով հետապնդման ենթարկված անձանց միջազգային պաշտպանություն են տրամադրում աշխարհի ավելի քան 140 պետություններ, որոնք միացել են ՄԱԿ-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ.-ի Ժնևի կոնվենցիային:

Հայաստանը 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունել է ապաստանի ոլորտը կարգավորող «Փախստականների և ապաստանի մասին» ազգային օրենքը, որում՝ «փախստական» ճանաչվելու համար 1951 թվականի Կոնվենցիայով ամրագրված հինգ հիմքերի հետ մեկտեղ ամրագրվել են ևս հինգը՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, համատարած բռնություն, արտաքին հարձակում, ներքին հակամարտություններ, հասարակական կարգի լուրջ խախտումներ: Այսինքն, այն անձինք, ովքեր ստիպված են եղել լքել իրենց երկիրը վերջին հինգ հիմքերից որևէ մեկի պատճառով, Հայաստանում պաշտպանություն հայցելու դեպքում կարող են նույնպես ճանաչվել փախստական և ստանալ ապաստան:

Ապաստանի հայցի քննարկման ողջ ժամանակահատվածում (3 ամիս, ևս 3 ամիս երկարաձգելու հնարավորությամբ) ապաստան հայցողները բնակեցվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում: Կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու համար, նրանց տրամադրվում է դրամական օգնություն: Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչվելուց և ապաստան ստանալուց հետո ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվող ապաստան հայցողը պարտավոր է ազատել սենյակը, իսկ դրամական օգնություն ստացողի դեպքում՝ օգնության տրամադրումը դադարեցվում է, քանի որ ճանաչված փախստականների համար գործում են ինտեգրման ծրագրեր:

Հայաստանում ապաստան հայցողներն ու փախստական ճանաչվածները՝ պատշաճ փաստաթղթավորման դեպքում, ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ, մասնավորապես՝ անվճար իրավաբանական օգնության, կրթության, բուժօգնության, սոցիալական ապահովության, աշխատանքի, ազատ տեղաշարժի և այլ իրավունքներ: Ապաստան հայցողներն ու փախստականները՝ օրենքով սահմանված իրենց իրավունքներն իրականացնելիս, պետք է հարգեն Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի քաղաքացիների և այլ անձանց օրինական շահերը, իրավունքներն ու ազատությունները, պահպանեն հասարակական կարգը և Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

Ապաստանի հայց ներկայացնելու, փախստականի կարգավիճակ ստանալու և հայցի մերժման ընթացակարգերին կարելի է ավելի մանրամասը ծանոթանալ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության կայքում, հետևյալ հղումներով՝ Ապաստանի հայցից մինչև փախստականի կարգավիճակի տրամադրում և Հայցի մերժումից մինչև երկրից հեռացում:

Հայաստանում ապաստան հայցած օտարերկրացիներ

2018թ.-ին Հայաստանում ապաստան հայցած օտարերկրացիների թիվը 2017թ.-ի համեմատ աճել է մոտ 44%-ով, և 2018-2021թթ. տատանվել տարեկան 206-260-ի սահմաններում: Նույն ժամանակահատվածում, փախստականի կարգավիճակ է շնորհվել ընդհանուր առմամբ 347 օտարերկրացու կամ ապաստանի հայց ներկայացրած 932 անձանց շուրջ 37%-ին:

Հայաստանում ապաստան հայցած օտարերկրացիների թիվը, փախստական ճանաչված անձանց թիվը, կարճված/կասեցված և մերժված դիմումների թիվը



ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն

2018-2021թթ. Հայաստանում ամենահաճախը ապաստան են հայցել Իրանի, Իրաքի և Սիրիայի քաղաքացիները:

2018-2021թթ. Հայաստանում ապաստան հայցած և փախստական ճանաչված անձանց թիվը, ըստ ապաստան հայցողի քաղաքացիության



ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն

Թեև Հայաստանում ապաստանի հայց ներկայացնողների թվում 2018-2021թթ. շարունակել են գերակշռել տղամարդիկ, 2020թ.-ից սկսած նրանց մասնաբաժինը նվազման միտում է դրսևորել: Միաժամանակ 2020թ.-ից սկսած որոշակիորեն նվազել է 18-34 տարեկան ապաստան հայցողների մասնաբաժինը, իսկ 35-64 տարեկաններինը՝ ավելացել:

Հայաստանում ապաստան հայցողների սեռատարիքային կազմը:

	0-13		14-17		18-34		35-64		65+		Ընդամենը	
	ԱՐ	ԻԳ	ԱՐ	ԻԳ	ԱՐ	ԻԳ	ԱՐ	ԻԳ	ԱՐ	ԻԳ	ԱՐ	ԻԳ
2018	12%	9%	4%	0%	30%	11%	20%	13%	0%	0%	67%	33%
2019	8%	5%	4%	1%	33%	8%	25%	10%	1%	3%	72%	28%
2020	6%	6%	6%	3%	25%	8%	27%	16%	0%	1%	66%	34%
2021	8%	11%	3%	3%	20%	12%	26%	15%	0%	1%	58%	42%
Ընդամենը	**8%**	**8%**	**4%**	**2%**	**27%**	**10%**	**25%**	**13%**	**1%**	**1%**	**66%**	**34%**

ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն

Հայաստանում փախստական ճանաչված անձանց ինտեգրմանն աջակցող ծրագրեր

2017թ.-ի փետրվարին ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի» իրականացմանն ուղղված գործողությունների ծրագրով նախատեսվել է 3 հիմնական գործողություն՝

- ✓ հայոց լեզվի դասընթացների կազմակերպում.
- ✓ քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում.
- ✓ ժամանակավոր կացարանի տրամադրում:

2018-2019թթ. տարբեր երկրներից (Եմեն, Իրան, Նիգերիա, Ուկրաինա և այլն) շուրջ 50 փախստական մասնակցել են **հայոց լեզվի դասընթացներին**, որոնք իրականացվել են Հայկական ընդհանուր բարեգործական միության Վիրտուալ քոլեջի կողմից: 2020-2021թթ. ծրագիրը չի իրականացվել ՔՈՎԻԴ -ի համավարակի բռնկման և 2020թ.-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի պատճառով:

Քաղաքացիական կողմնորոշման դասընթացները նպատակ ունեն նպաստել իմիգրանտների իմացությանը ընդունող հասարակության արժեքների, մշակույթի, իրենց իրավունքների, պարտականությունների և հնարավորությունների վերաբերյալ: 2018-2019թթ. կազմակերպվել է դասընթացների 4 խումբ՝ երկու խումբը հայալեզու, մեկը արաբալեզու և մեկը պարսկալեզու փախստականների համար: Ընդհանուր առմամբ, 2018-2019թթ. դասընթացներին մասնակցել են շուրջ 30 փախստականներ: 2018 թվականին դասընթացները կազմակերպվել են Երևանի պետական համալսարանի, իսկ 2019 թվականին՝ «ԿԱՁԱ» շվեյցարարկան մարդասիրական հիմնադրամի կողմից: 2020-2021թթ. ծրագիրը չի իրականացվել վերը նշված ֆորս մաժորային իրավիճակներով պայմանավորված:

Ժամանակավոր կացարանի տրամադրումը իրականացվում է առկա սոցիալական բնակարաններում տեղավորման, ինչպես նաև բնակարան վարձակալելու համար գումարի տրամադրմամբ: 2018-2021 թվականներին ծրագրից օգտվել է 216 անձ (92 ընտանիք) ՝ ստանալով ամսական 60 հազար ՀՀ դրամ 9 ամսվա ընթացքում, այդ թվում՝ 79 անձ՝ 2018թ.-ին, 38 անձ՝ 2019թ.-ին, 45 անձ՝ 2020թ.-ին և 54 անձ՝ 2021թ.-ին:

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԻՄԻԳՐԱՑԻԱ

Անօրինական իմիգրացիան Հայաստանում զանգվածային բնույթ չի կրում: Հայաստան մուտք գործելը որպես կանոն օրինական է, իսկ խախտումները հիմնականում վերաբերում են ՀՀ-ում գտնվելու իրավական նորմերին:

2021թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է պետական սահմանի ապօրինի հատման 44 դեպք: Պետական սահմանի ապօրինի հատման փորձերը հիմնականում կատարվել են կեղծ անձնագրերի, վիզաների և ճամփորդական այլ փաստաթղթերի օգտագործմամբ:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տվյալներով 2018-2021թթ. Հայաստանում հայտնաբերվել է ընդհանուր առմամբ շուրջ 18,000 անօրինական միգրանտ:

Հայաստանում որպես անօրինական գտնվող հայտնաբերված օտարերկրացիների թիվը

ՀՀ ոստիկանություն

Նույն ժամանակահատվածում մերժվել է 1,819 օտարերկրացու՝ Հայաստանում գտնվելու իրավունքի տրամադրումը, իսկ 66 օտարերկրացի զրկվել է Հայաստանում գտնվելու իրավունքից:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն օտարերկրացին պարտավոր է կամավոր հեռանալ Հայաստանի Հանրապետության տարածքից, եթե՝

- ✓ լրացել է նրա մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը,
- ✓ մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվել,
- ✓ մերժվել է նրա՝ կացության կարգավիճակ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու համար դիմումը,
- ✓ նա զրկվել է կացության կարգավիճակից:

Եթե օրենքով նախատեսված դեպքերում օտարերկրացին կամավոր չի հեռացել Հայաստանի Հանրապետության տարածքից, ապա Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան:

2018-2021թթ. ժամանակահատվածում Հայաստանից հետ վերադարձման (արտաքսման) վերաբերյալ միջոցներ են կիրառվել ընդամենը 11 օտարերկրացու նկատմամբ:

Նույն ժամանակահատվածում Հայաստանում տարբեր օրինախախտումների համար վարչական պատասխանատվության է ենթարկվել տարեկան միջինում մոտ 4,500, իսկ քրեական պատասխանատվության՝ տարեկան միջինում մոտ 200 օտարերկրացի:

Հայաստանում վարչական և քրեական պատասխանատվության ենթարկված օտարերկրացիների թիվը



ՀՀ ոստիկանություն

ԷՄԻԳՐԱՑԻԱ

ԷՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն իմիգրացիայի ցուցանիշների, Հայաստանից էմիգրացիայի ծավալների և էմիգրացիոն հոսքի բնութագրիչների մասին ՀՀ պաշտոնական աղբյուրների կողմից հավաքագրվող և հրապարակվող տեղեկատվությունը հասկանալի պատճառներով սահմանափակ է: Վարչական վիճակագրություն հասանելի է միայն օտարերկրյա պետություններում հաշվառված այն քաղաքացիների մասին, ովքեր արտերկրում իրենց բնակության փաստի մասին որոշել են ծանուցել այդ երկրներում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կամ հյուպատոսական հիմնարկներին:

Ըստ ՀՀ ԱԳՆ-ից և ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ից ստացված տվյալների, 2018-2021թթ. ժամանակահատվածում արտերկրում հաշվառվել (և այդ մասին տեղեկացրել է) տարեկան միջինում 4,200 ՀՀ քաղաքացի, իսկ 2021թ.-ի տարեվերջի դրությամբ արտերկրում հաշվառված էր ընդհանուր առմամբ շուրջ 9,000 ՀՀ քաղաքացի:

Արտերկրում հաշվառված (արտերկրում ՀՀ հյուպատոսական հիմնարկներ հաշվառման մասին տեղեկություն փոխանցած) ՀՀ քաղաքացիների թիվը



ՀՀ ԱԳՆ, ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրի, 2021թ.-ի վերջի դրությամբ արտերկրում հաշվառված ՀՀ քաղաքացիների 52%-ը կանայք էին, 48%-ը տղամարդիկ, ընդ որում արտերկրում հաշվառվածների շուրջ երկու երրորդը 20-64 տարեկան էին:

2021թ.-ի տարեվերջի դրությամբ արտերկրում հաշվառված (արտերկրում ՀՀ հյուպատոսական հիմնարկներ հաշվառման մասին տեղեկություն փոխանցած) ՀՀ քաղաքացիների սեռատարիքային կազմը



ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Ըստ նույն աղբյուրի արտերկրում հաշվառված (և այդ մասին տեղեկացրած) ՀՀ քաղաքացիների մեծ մասը՝ շուրջ 60%-ը, 2021թ.-ի տարեվերջի դրությամբ հաշվառված էր Ռուսաստանում, Լիբանանում կամ Վրաստանում: ԵՄ և ԵԱԱԸ երկրներում հաշվառված էր մոտ 13%-ը, Իրանում, ԱՄՆ-ում և Սիրիայում՝ 5-6-ական տոկոսը:

2021թ.-ի տարեվերջի դրությամբ արտերկրում հաշվառված (արտերկրում ՀՀ հյուպատոսական հիմնարկներ հաշվառման մասին տեղեկություն փոխանցած) ՀՀ քաղաքացիներն ըստ հաշվառման երկրի



ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Հաշվի առնելով, որ Հայաստանից էմիգրացիոն հոսքերի ավելի համապարփակ վիճակագրություն կարելի է ստանալ որոշ ընդունող երկրների պաշտոնական աղբյուրներից, ստորև հակիրճ կանդրադառնանք հայաստանցի էմիգրանտների հիմնական նշանակետերից երկուսին՝ Ռուսաստանին և ԵՄ/ԵԱԱԸ պետություններին:

Հայաստանից Ռուսաստան էմիգրացիայի հիմնական ցուցանիշները

Համաձայն ՌԴ ներքին գործերի նախարարության հրապարակումների, 2017-2019թթ. Ռուսաստանում միգրացիոն հաշվառման վերցված ՀՀ քաղաքացիների թիվը դանդաղ նվազման միտում է ունեցել (տարեկան 1-2%-ով), իսկ 2020թ.-ին՝ ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված, նվազել է շուրջ 43%-ով: 2021թ.-ի ընթացքում Ռուսաստանում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը կրկին զգալիորեն աճել է, սակայն նախաճգնաժամային 2019թ.-ի համեմատ ՌԴ-ում հաշվառվել է շուրջ 9%-ով պակաս ՀՀ քաղաքացի:

Հատկանշական է, որ 2017-2020թթ. ավելի զգալի տեմպերով կրճատվել է տարվա ընթացքում Ռուսաստանում հաշվառված և հաշվառումից դուրս եկած ՀՀ քաղաքացիների թվի տարբերությունը:

Ռուսաստանում 2017-2021թթ. միգրացիոն հաշվառման վերցված և հաշվառումից հանված ՀՀ քաղաքացիների թիվը



ՌԴ ներքին գործերի նախարարություն

Նույն աղբյուրի համաձայն, 2018-2021թթ. ՀՀ քաղաքացիների 7-10%-ն է միայն Ռուսաստանում հաշվառվել ըստ բնակության վայրի, իսկ ճնշող մեծամասնությունը՝ ըստ գտնվելու վայրի: Վերջիններս միգրացիոն հաշվառման են վերցվել առավելապես աշխատանքի կամ մասնավոր այցի հիմքով: 2021թ.-ին ՌԴ-ում աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական պայմանագրի կնքման ծանուցում է ներկայացրել 138,946 ՀՀ քաղաքացի:

Ռուսաստանում 2018-2021թթ. ըստ գտնվելու վայրի միգրացիոն հաշվառման վերցված ՀՀ քաղաքացիներն ըստ ուղևորության նպատակի

ՌԴ ներքին գործերի նախարարություն

Վերը բերված տվյալները համահունչ են նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի, ինչպես նաև մի շարք հայաստանյան անկախ հետազոտական կենտրոնների իրականացրած տարբեր հետազոտությունների արդյունքներին, որոնք փաստել են, որ Հայաստանից դեպի Ռուսաստան միգրացիոն հոսքը գերազանցապես բաղկացած է ժամանակավոր աշխատանքային միգրանտներից:

ՌԴ-ում 2017-2021թթ. կացության կարգավիճակներ կամ քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիների վերաբերյալ վիճակագրության ուսումնասիրությունը մի շարք էական միտումներ է արձանագրում:

- ✓ 2017-2021թթ. շարունակաբար նվազել է տարվա ընթացքում առաջին անգամ ժամանակավոր կացության թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիների (2021թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ 49%-ով), ինչպես նաև տարվա վերջում վավեր ժամանակավոր կացության թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը (2021թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ 61%-ով):
- ✓ տարվա ընթացքում առաջին անգամ բնակվելու թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիների թիվը 2017-2019թթ. նվազման միտում է ունեցել (2019թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ 11%-ով), ապա 2020-2021թթ.-ին զգալիորեն աճել (2021թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ 77%-ով): Միաժամանակ, տարեվերջի դրությամբ ՌԴ-ում վավեր բնակվելու թույլտվություն ունեցողների թիվը կայուն նվազել է (2021թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ 30%-ով):
- ✓ ՌԴ քաղաքացիություն ձեռք բերածների թիվը 2017-2019թթ. ժամանակահատվածում տատանվել է տարեկան 24-27,000-ի միջակայքում, այնուհետև աճել 2020-2021թթ. (2021թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ 87%-ով):

Ռուսաստանում 2017-2021թթ. կացության կարգավիճակներ կամ քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիների թիվը

	2017	2018	2019	2020	2021
Տարվա ընթացքում առաջին անգամ ժամանակավոր կացության թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիներ	22,860	19,526	16,632	8,490	11,720
Տարեվերջի դրությամբ վավեր ժամանակավոր կացության թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիներ	41,247	34,881	30,098	20,257	15,905
Տարվա ընթացքում առաջին անգամ բնակության թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիներ	13,320	12,058	11,856	18,291	23,511
Տարեվերջի դրությամբ վավեր բնակվելու թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիներ	66,043	63,974	60,561	56,155	46,255
Տարվա ընթացքում ՌԴ քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիներ	25,144	27,134	24,024	30,538	46,931

ՌԴ ներքին գործերի նախարարություն

Հայաստանից ԵՄ և ԵԱԱԸ երկրներ էմիգրացիայի հիմնական ցուցանիշները

Ի տարբերություն դեպի ՌԴ միգրացիոն հոսքի, որում ավանդաբար գերակշռել են ժամանակավոր աշխատանքային միգրանտները, դեպի ԵՄ և ԵԱԱԸ պետություններ միգրացիոն հոսքում ավելի զգալի է երկարաժամկետ միգրանտների կշիռը: Այսպես, ըստ Եվրոստատի տվյալների, 2018-2021թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա վերջում ԵՄ և ԵԱԱԸ երկրներում բնակվելու վավեր թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիների 90%-ից ավելին ունեին երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետով) բնակվելու թույլտվություններ:

Եվրոստատի տվյալների շտեմարանի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ՝

- ✓ 2018-2021թթ. շարունակաբար աճել է ԵՄ և ԵԱԱԸ երկրներում բնակվելու վավեր թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը (2021թ.-ի տարեվերջի դրությամբ 2017թ.-ի տարեվեջի համեմատ շուրջ 15%-ով):
- ✓ տարվա ընթացքում առաջին անգամ ԵՄ և ԵԱԱԸ երկրներում բնակվելու թույլտվություն ստացած ՀՀ քաղաքաքացիների թիվը 2018-2021թթ. տատանվել է շուրջ 7,800-9,700-ի միջակայքում՝ 2021թ.-ին 2017թ.-ի համեմատ աճելով շուրջ 17%-ով:
- ✓ միաժամանակ, տարեվերջի դրությամբ ԵՄ և ԵԱԱԸ երկրներում փաստացի երկարաժամկետ բնակվող (1 տարի և ավելի) ՀՀ քաղաքացիների թիվը 2017-2021թթ. զգալի փոփոխությունների չի ենթարկվել՝ տատանվելով 28-29,000-ի միջակայքում:
- ✓ ԵՄ և ԵԱԱԸ պետությունների քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիների թիվը նույնպես էականորեն չի փոխվել՝ 2018-2021թթ. ընթացքում տարեկան կազմելով մոտ 2,700-2,800 անձ:

ԵՄ երկրներում կացության կարգավիճակներ կամ քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիներ

	2017	2018	2019	2020	2021
Տարվա ընթացքում առաջին անգամ բնակվելու թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիներ	7,460	8,201	9,740	7,827	8,759
Կարճաժամկետ (մինչև 1 տարի)	2,273	2,457	3,230	2,688	4,120
Երկարաժամկետ (1 տարի և ավելի)	5,187	5,744	6,510	5,139	4,639
Տարեվերջի դրությամբ վավեր բնակվելու թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիներ	63,996	65,287	67,504	70,533	73,463
Կարճաժամկետ (մինչև 1 տարի)	3,261	3,201	5,455	4,376	5,539
Երկարաժամկետ (1 տարի և ավելի)	60,735	62,086	62,049	66,157	67,924
Տարեվերջի դրությամբ ԵՄ և ԵԱԱԸ երկրներում երկարաժամկետ բնակվող ՀՀ քաղաքացիներ	27,875	27,986	27,403	28,861	29,164
Տարվա ընթացքում քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիներ	2,559	2,831	2,722	2,727	-

Եվրոստատ

Նույն աղբյուրի համաձայն, ԵՄ և ԵԱԱԸ երկրներում 2018-2021թթ. ՀՀ քաղաքացիներին առաջին անգամ բնակվելու թույլտվություն տրամադրելու երկու հիմնական հիմքերն են եղել աշխատանքը և ընտանեկան հանգամանքները, ընդ որում 2018-2020թթ. ընտանեկան հանգամանքների բերումով բնակվելու թույլտվություն ձեռք բերածները զգալիորեն ավելի մեծ կշիռ են ունեցել, քան աշխատանքային միգրանտները, մինչդեռ 2021թ.-ին աշխատանքի հիմքով տրված թույլտվությունների կշիռը էականորեն ավելացել և գերազանցել է ընտանեկան հանգամանքների հիմքով տրված թույլտվությունների թիվը:

ԵՄ և ԵԱԱԸ երկրներում 2018-2021թթ. առաջին անգամ բնակության թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիներն ըստ ուղևորության նպատակի



Եվրոստատ

Ըստ Եվրոստատի տվյալների, ԵՄ և ԵԱԱԸ պետություններում բնակվելու վավեր թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիների 60%-ից ավելին 2021թ.-ի տարեվերջի դրությամբ բնակվում էր Ֆրանսիայում, Գերմանիայում և Իսպանիայում: Միաժամանակ, Լեհաստանը 2021թ.-ին առաջատարն էր՝ 2021թ.-ին ՀՀ քաղաքացիներին առաջին անգամ բնակվելու թույլտվություն տրամադրելու հարցում:

ԵՄ և ԵԱԱԸ երկրներում 2021թ. տարեվերջին բնակության վավեր թույլտվություն ունեցող ՀՀ քաղաքացիները և 2021թ. առաջին անգամ բնակության թույլտվություն ստացած ՀՀ քաղաքացիներն ըստ երկրների



Եվրոստատ

2018-2020թթ. ՀՀ քաղաքացիներին ամենահաճախը ԵՄ և ԵԱԱԸ երկրների քաղաքացիություն է շնորհվել Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում և Բելգիայում:

ԵՄ և ԵԱԱԸ երկրներում 2018-2020թթ. քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացիներն ըստ երկրների



Եվրոստատ

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԻ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

ՄԱԿ ՓԳՀ-ի, Եվրոստատի և ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի տվյալների համադրությամբ կարելի է արձանագրել, որ արտերկրում առաջին անգամ ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների թիվը 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ նվազել է շուրջ 27%-ով և շարունակել է նվազել 2019-2020թթ.: Թեև առաջին անգամ ապաստան հայցողների թիվը կրկին աճել է 2021թ.-ին, 2017թ.-ի համեմատ ցուցանիշը գրեթե 58%-ով ցածր է եղել:

Արտերկրում ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան



ՄԱԿ ՓԳՀ, Եվրոստատ, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտ

Նույն աղբյուրների համաձայն, առաջին անգամ ապաստան հայցողների մեծամասնությունը 2018-2021թթ. ապաստան է հայցել ԵՄ և Եվրոպական ազատ առևտրի ընկերակցության (ԵԱԱԸ) երկրներում, հիմնականում Ֆրանսիայում և Գերմանիայում: Միաժամանակ, եթե այլ երկրներում (առավելապես ԱՄՆ-ում) առաջին անգամ ապաստան հայցողների մասնաբաժինը 2018թ.-ին ընդամենը 15% էր, ապա 2021թ.-ին արդեն 40%:

Առաջին անգամ ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների թիվն ըստ երկրների



ՄԱԿ ՓԳՀ, Եվրոստատ, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտ

Հատկանշական է, որ 2018-2021թթ. ԵՄ և ԵԱԱԸ երկրներում և ԱՄՆ-ում փախստականի կարգավիճակ է շնորհվել ընդհանուր առմամբ 1,180 ՀՀ քաղաքացու, մինչդեռ նույն ժամանակահատվածում նշված երկրներում դիտարկվել է ՀՀ քաղաքացիների կողմից ներկայացված շուրջ 20,000 հայց (ներառյալ կրկնակի հայցերն ու բողոքարկումները):

ԵՄ և ԵԱԱԸ երկրներում և ԱՄՆ-ում
փախստականի կարգավիճակ ստացած ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան



Եվրոստատ, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՍԿԻԶԲ ԱՌՆՈՂ ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Հայաստանից անկանոն միգրացիայի դեմ պայքարելու նպատակով Միգրացիոն ծառայությունը միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ 2019 թվականից նախաձեռնել և իրականացրել է տեղեկատվական արշավների և լրատվամիջոցների կարողությունների զարգացման մի շարք միջոցառումներ: Այս միջոցառումների հիմնական նպատակը բնակչության շրջանում էմիգրացիայի բացասական հետևանքների և ռիսկերի մասին տեղեկացվածության բարձրացումն է: Երկարաժամկետ նպատակն է աջակցել տեղեկացված և զգույշ միգրացիոն վարքագծի ձևավորմանը: Մասնավորապես, միգրացիոն ծառայությունը նախաձեռնել է **«Մեդիա և միգրացիա»** կոչվող հանդիպումների շարքը, որի նպատակն է միգրացիայի հետ կապված մեդիա բովանդակությունը հանրությանը ներկայացնել ճշգրիտ և վստահելի կերպով:

Անօրինական միգրացիայի կազմակերպման հատկանիշներով Հայաստանում 2018-2021թթ. ժամանակահատվածում հարուցվել է 38 քրեական գործ: Ապօրինի միգրացիայի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակներում համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով տարածվող՝ աշխատանքի տեղավորման կեղծ առաջարկների չեզոքացման ու անվտանգ միգրացիայի ապահովման նպատակով՝ ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների կողմից իրականացվում է մշտադիտարկում համացանցի .am և հայալեզու տիրույթներում՝ անօրինական բովանդակությամբ տեղեկատվության հայտնաբերման և արագ արձագանքման նպատակով:

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2018-2021թթ. Հայաստան վերադարձի հոսքերն ակտիվացման միտում են ունեցել, ինչը մեծապես պայմանավորված էր մի կողմից՝ Եվրամիության երկրներում խստացված միգրացիոն քաղաքականությամբ և մյուս կողմից՝ ՔՈՎԻԴ-19 համավարակով:

Պայմանավորված 2015թ.-ի Եվրոպայի միգրացիոն ճգնաժամով, Եվրոպական Միությունից միգրանտների վերադարձը իրենց ծագման երկրներ ԵՄ միգրացիոն քաղաքականության օրակարգի առաջնահերթություններից է և 2020թ.-ի սեպտեմբերի 23-ին Եվրոպական միության հանձնաժողովի կողմից ընդունված Միգրացիայի և ապաստանի վերաբերյալ նոր պակտը (New Pact on Migration and Asylum Documents adopted on 23 September, 2020) նպատակ ունի խստիվ կանխարգելել անկանոն միգրացիան և թույլ չտալ, որպեսզի ապաստանի համակարգը չարաշահվի:

Հայաստանից մեկնած միգրանտները հիմնականում տնտեսական միգրատներ են և չեն բավարարում «Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով» սահմանված ապաստանի կամ փախստականի կարգավիճակ տրամադրելու անհրաժեշտ պայմաններին: Հայաստանը նաև «ապահով» երկիր է ճանաչվել ԵՄ անդամ մի քանի երկրների կողմից, օր. Բուլղարիայի, Նորվեգիայի, Ֆրանսիայի (2010թ-ից):

Մյուս կողմից, ՔՈՎԻԴ-19 համավարակի բերումով 2020թ.-ից ակտիվացավ կամավոր վերադարձը, երբ տարբեր երկրներում գտնվող ՀՀ քաղաքացիները գերադասում էին կամավոր վերադառնալ իրենց երկիր, այդ թվում՝ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտները: Սակայն հակառակ երևույթն էլ կար, երբ մարդիկ գերադասում էին մնալ՝ հասկանալով, որ ընդունող երկիրը լքելով, հնարավոր է չկարողանային նորից այնտեղ վերադառնալ:

Ելնելով համավարակի և պատերազմական իրավիճակից՝ հարկադիր վերադարձը հետաձգելու պայմանավորվածություններ էին ձեռք բերվել ընդունող երկրների համապատասխան կառույցների հետ, այնուամենայնիվ, 2021թ.-ից այդ գործընթացը կրկին ակտիվացավ և եվրոպական երկրները սկսեցին վերադարձնել իրենց երկրներում անկանոն կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիներին: Այսպես, 2021թ.-ի ընթացքում ԵՄ երկրների

կողմից կազմակերպվել են 13 չարթերային չվերթներ՝ 12 չվերթ Գերմանիայից (345 վերադարձող) և 1 չվերթ Շվեդիայից (7 վերադարձող): Ընդհանուր առմամբ 2021թ.-ի ընթացքում չարթերային չվերթներով Հայաստան են վերադարձվել 352 ՀՀ քաղաքացիներ:

ԵՄ և ԵԱԱԸ անդամ երկրներում ՀՀ քաղաքացիների վերադարձի վիճակագրությունը

	2018	2019	2020
Ընդունված վերադարձի որոշումները	4,135	3,765	2,900
Փաստացի վերադարձը	1,950	2,095	815
Վերադարձի տոկոսը	47.1%	55.6%	28.1%

Եվրոստատ

ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄ (ՌԵԱԴՄԻՍԻԱ)

Ռեադմիսիոն համաձայնագրերի նպատակն է հեշտացնել պայմանավորվող կողմերի պետությունների տարածքում օրինական գտնվելու հիմքեր չունեցող անձանց վերադարձն իրենց ծագման կամ վերջին բնակության երկիր:

2002թ.-ից ի վեր Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն ներգրավվել է ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման գործընթացում՝ այն դիտարկելով որպես անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործիքներից մեկը:

Հայաստանի Հանրապետությունը հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրեր ունի հետևյալ պետությունների հետ.

- Լատվիա (2003թ.)
- Դանիա (2004 թ.)
- Լիտվա (2004թ.)
- Շվեյցարիա (2005թ.)
- Գերմանիա (2008թ.)
- Բուլղարիա (2008թ.)
- Շվեդիա (2009թ.)
- Բենիլյուքսի պետություններ (2010թ.)
- Նորվեգիա (2010թ.)
- Չեխիա (2011թ.)
- Ռուսաստան (2011թ.)
- Եվրոպական միություն (2013թ., ուժի մեջ է մտել 2014թ. Հունվարի 1-ից)

2021թ.-ի դրությամբ Հայաստան-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակներում վավերացման գործընթաց էին անցել և ուժի մեջ մտել համաձայնագիրը կիրարկող արձանագրությունները հետևյալ պետությունների հետ.

Էստոնիա (2017թ.)

Գերմանիա (2020թ.)

Ֆրանսիա (2020թ.)

Բուլղարիա (2008թ.)

Բենիլյուքսի պետություններ (2020թ.)

Չեխիա (2011թ.)

2019թ.-ի փետրվարից Հայաստանում շահագործվում է **Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգը (ՌՀԿԷՀ)**, որի շնորհիվ ապահովվում է անձի վերաբերյալ ռեադմիսիոն հայցի և պատասխանի փոխանցման գործընթացի իրականացումը՝ դարձնելով այդ ընթացակարգերն առավել սահուն և արագ:

2021թ.-ի դրությամբ ՌՀԿԷՀ-ի միջոցով հետընդունման հայցեր էին ստացվում եմ 13 երկրների (Գերմանիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Իտալիայի, Դանիայի, Լյուքսեմբուրգի, Շվեդիայի և Հունաստանի) միգրացիոն հարցերով զբաղվող համապատասխան մարմինների ներկայացուցիչների կողմից:

Հայաստանի ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո՝ 2014թ.-ից ի վեր մեկնարկել էր ԵԱՏՄ անդամ պետությունների հետ երկկողմ ձևաչափով ռեադմիսիոն համաձայնագրեր կնքելու գործընթացը: Իրականացված աշխատանքների արդյունքում 2021թ.-ին ստորագրվել է Բելառուսի հետ ռեադմիսիոն համաձայնագիրը, քննարկվում են Ղազախստանի և Ղրղզստանի հետ համաձայնագրերի նախագծերը:

Քննարկման և համաձայնեցման տարբեր փուլերում են նաև Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի հետ ռեադմիսիոն համաձայնագրերի նախագծերը:

Ուժի մեջ մտած ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում 2018-2021թթ. ստացվել և սահմանված կարգով ընթացք է տրվել ընդհանուր թվով 3,768 ռեադմիսիոն հայցերի՝ 7,200 անձանց մասին: Ստացված հայցերի թվով առաջատար երկիրը Գերմանիան է՝ 2,452 հայց 4,868 անձանց մասին, որից հաստատվել է 4,059 անձի քաղաքացիությունը (86.3%), այնուհետև՝ Ֆրանսիան, որտեղից ստացվել է 457 հայց 609 անձանց մասին, որից հաստատվել է 553 անձի քաղաքացիությունը (92.8%):

Ռեադմիսիոն հայցերի վիճակագրությունը 2018-2021թթ.



ՀՀ միգրացիոն ծառայություն

Դրական պատասխանների տոկոսը հաշվարկվում է տարվա ընթացքում քաղաքացիությունը չհաստատված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց թվի ընդհանուր գումարից: Հայցերում նշված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց ու քաղաքացիությունը չհաստատված անձանց գումարի տարբերությունը դեռ նույնականացման գործընթացում գտնվող հայցերում նշված անձանց թիվն է:

2020թ.-ի ընթացքում, առաջին անգամ, ՀՀ-ից ռեադմիսիոն հայցեր են ուղարկվել Հայաստանում անկանոն կարգավիճակում գտնվող Նիդերլանդների Թագավորության մեկ և ՌԴ մեկ քաղաքացիների՝ իրենց ծագման երկիր վերադարձի վերաբերյալ:

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Հայաստան վերադարձած միգրանտների աջակցության ծրագրեր են իրականացնում ՀՀ միգրացիոն ծառայությունը, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM), Ֆրանսիայի միգրացիայի և ինտեգրման գրասենյակի (OFII)՝ ծառայություն մատուցող գործընկեր հինգ կազմակերպությունները և Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցը (ERRIN Հայաստան):

2020 թվականից Միգրացիոն ծառայությունն իրականացնում է «ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիրը»: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից՝

Ա. տեղեկատվական աջակցության տրամադրում և կարիքներին համապատասխան ուղղորդում, և

Բ. բնակվարձի փոխհատուցում հարկադիր, իսկ 2021-ից սկսած՝ առանձին դեպքերում նաև որոշ խոցելի խմբերին պատկանող կամավոր վերադարձողներին (բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցողներ):

2020-2021թթ. ընթացքում բնակվարձի փոխհատուցման բաղադրիչով 6 ամիս ժամկետով՝ ամսական 60 հազար դրամի չափով աջակցություն է տրամադրվել Գերմանիայից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Ավստրիայից, Շվեյցարիայից, ՌԴ-ից և Թուրքիայից վերադարձած 31 շահառու ընտանիքների (88 անձ):

Առկա վիճակագրության համաձայն, 2018-2021թթ. ժամանակահատվածում Հայաստան է վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին, այդ թվում՝ միգրացիոն ծառայության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրին է դիմել 6,208 քաղաքացի: Քանի որ ոլորտում իրականացվող ծրագրերի մեծ մասն աջակցում է կամավոր վերադարձին, 2018-2021թթ. ծրագրերին դիմածների ճնշող մեծամասնությունը (82.1%) կամավոր վերադարձողներ էին:

Միգրացիոն ծառայությունը գործընկեր կազմակերպություններից վերաինտեգրման ծրագրերի շահառուների վերաբերյալ մանրամասը վիճակագրություն է հավաքագրում 2019 թվականից: Ընդհանուր առմամբ, 2019-2021թթ. ժամանակահատվածում 4,437 վերադարձողից վերաինտեգրման աջակցություն ստացել է 4039-ը, կամ 91%-ը:

Վերաինտեգրման ծրագրերի 2018-2021 թթ. ամփոփ վիճակագրություն



ՀՀ միգրացիոն ծառայություն

Հայաստանում վերադարձի ու վերաինտեգրման գործընթացների արդյունավետ համակարգման նպատակով Միգրացիոն ծառայության նախաձեռնությամբ 2018թ.-ին կազմավորվել է **Վերադարձի և վերաինտեգրման հարցերով ֆորումը**, որը խնդրին առնչվող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների ոչ ֆորմալ համագործակցության հարթակ է: Ֆորումը հնարավորություն է ընձեռում ոլորտում ներգրավված շահագրգիռ բոլոր կողմերին տեղեկատվություն փոխանակել Հայաստանում իրականացվող վերաինտեգրման ծրագրերի, առկա խնդիրների և մարտահրավերների, ինչպես նաև կուտակված փորձի մասին: Ֆորումի աշխատանքներում ընդգրկված են **IOM, ICMPD, OFII, Armenian Caritas, People in Need, Armenian Foundation For Sustainable Development**, և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ (1988-1994ԹԹ.)

Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և Ադրբեջանի այլ բնակավայրերում ազգությամբ հայ քաղաքացիների զանգվածային ջարդերը և դրանց հետևած պատերազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում ու հարակից շրջաններում հանգեցրել են 1988-1992թթ. Ադրբեջանից ավելի քան կես միլիոն հայի բռնի տեղահանման: Բռնի տեղահանվածներից 360,000-ը ապաստան են գտել Հայաստանի Հանրապետությունում, իսկ 1997թ.-ի դրությամբ, ըստ իրականացված հաշվառման տվյալների, Հայաստանում բնակվող փախստականների թիվը կազմել է շուրջ 310,000 մարդ:

1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած՝ ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին մշտական կացարանով ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2019թ. նոյեմբերի 21-ին հաստատել է «ՀՀ տարեկան պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի միջոցով բնակարանային ապահովման ծրագիրը»: Ծրագրի իրականացման արդյունքում ապահովվում է Ադրբեջանից բռնագաղթած ընտանիքների արժանապատիվ կյանք ունենալու սահմանադրական անօտարելի իրավունքը և լուծվում 30 տարվա վաղեմություն ունեցող բնակարանային խնդիրը: Բնակարանների գնման վկայագրերի տրամադրման գործընթացի իրականացման պատասխանատուն ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայությունն է:

2019-2021թթ. ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում, որի շրջանակներում բնակարանի գնման վկայագրեր են ստացել 272 ընտանիքներ, որոնցից 221-ը արդեն իրացրել են վկայագրերը և գնել են բնակարաններ (փաստացի ծախսը կազմել է շուրջ 3,8 մլրդ. դրամ):

Դեռևս չլուծված է մնում 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված այն ընտանիքների մշտական կացարանի խնդիրը, ովքեր չեն բնակվում ժամանակվոր կացարաններում, սակայն չունեն նաև մշտական կացարան: Այդ անձանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 9-ի N330 որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը», որը դեռևս չի իրականացվել: Այդ որոշման համաձայն՝ բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումն իրականացվում է ըստ նրանց փաստացի բնակության վայրի՝ սոցիալական ծառայության տարածքային բաժիններում (ՍԾՏԲ, ներկայումս՝ ՄՍԾ), բնակարանի կարիք ունենալու վերաբերյալ փախստականների կողմից ներկայացրած դիմումների հիման վրա: Ըստ ՍԾՏԲ-ների և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված ցուցակների, որոնք թարմացվել են 2019թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ ՀՀ-ում բնակարանի կարիք ունեցող փախստականների թիվը կազմում էր 2,589 ընտանիք, որից 1,070-ը երևանում, իսկ 1,519-ը մարզերում:

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ (2020Թ.)

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված անձանց հաշվառելու, նրանց կարիքները գնահատելու և հետագայում նրանց վերադարձը կազմակերպելու նպատակով 2020թ. սեպտեմբերին Միգրացիոն ծառայության կողմից մշակվել է տեղեկատվական համակարգ, որին հասանելիություն ունեն ինչպես տեղական ինքնակառավարման, այնպես էլ շահագրգիռ բոլոր պետական մարմինները: Համակարգում ներառված անձանց նույնականացումը կատարվում է ՀՀ բնակչության պետական ռեգիստրի հետ համադրության միջոցով:

2020թ.-ին համակարգում հաշվառվել է 94,385 անձ (30,423 ընտանիք), որոնցից 65%-ը կանայք, իսկ 35%-ը տղամարդիկ: Ընդ որում տղամարդկանց մեծամասնությունը 0-16 տարեկան էին (60%) կամ 65 տարեկանից բարձր տարիքի (13%): Այսպիսով, Արցախից տեղահանվածները հիմնականում կանայք էին, երեխաներ և ծերեր:

Արցախում մարտական գործողությունների ավարտից հետո Արցախից տեղահանված անձանց ճնշող մեծամասնությունը (78%) 2021թ.-ի վերջի դրությամբ վերադարձել էր մշտական բնակության վայրեր: Բացառություն են կազմել այն տարածաշրջանները, որոնք անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ: 2021թ.-ի վերջի դրությամբ դեռևս Հայաստանում գտնվող 20,709 բռնի տեղահանվածների գրեթե կեսը Քաշաթաղի շրջանի բնակիչներ են, հաջորդ մեծ խմբերը՝ Հադրութի և Շահումյանի շրջանի բնակիչներ:

Արցախից բռնի տեղահանված և 2021-ի վերջի դրությամբ դեռևս Հայաստանում գտնվող անձանց բնակավայրը պատերազմից առաջ



ՀՀ միգրացիոն ծառայություն

Տեղահանված և 2021-ին դեռևս Հայաստանում գտնվող արցախցիների մոտ քառորդ մասը (5,567 անձ, 1,588 ընտանիք) բնակվում էր Երևանում, հաջորդ մեծաթիվ խմբերը հանգրվանել են Կոտայքում (3,291 անձ, 832 ընտանիք), Սյունիքում (3,250 անձ, 900 ընտանիք) և Արարատում (3,124 անձ, 793 ընտանիք):

Արցախից բռնի տեղահանված անձանց համար 44-օրյա պատերազմի հետևանքները մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը հաստատել և իրականացրել է աջակցության 20 ծրագիր: Ծրագրերից որևէ մեկով աջակցություն է ստացել արցախցիների 97%-ը:

Արցախցիներին տարաբնույթ աջակցություն են ցուցաբերել նաև ՀՀ-ում գործող տարբեր միջազգային, հասարակական և բարեգործական կազմակերպությունները:

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարն ընթանում է ավելի քան երկու տասնամյակ՝ սկսվելով 2002 թվականին և զգալի առաջընթաց արձանագրելով հետագա տարիներին: Ստեղծվել է հիմնարար օրենսդրական մեխանիզմ, որը եզրագծում է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարում ներգրավված դերակատարների գործառույթները և մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհ դարձած անձանց պաշտպանության ու աջակցության շրջանակը: Օրենսդրության ձևավորման առումով հիմնարար նշանակություն է ունեցել 2014 թվականի դեկտեմբերի 17-ին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, որի նպատակն էր առավել արդյունավետ դարձնել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի պաշտպանությունն ու աջակցությունը: Դրան հաջորդել է օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերի ընդունումը, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական այլ ակտերում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը:

Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարն արդյունավետ իրականացնելու նպատակով մշակվել և իրականացվել են եռամյա ազգային ծրագրեր: Այդ ծրագրերը մշակելիս մշտապես հաշվի են առնվել միջազգային կառույցների, մասնավորապես, Հայաստանի կողմից մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ զեկույցներում և ԱՄՆ-ի պետքարտուղարության կողմից հրապարակվող զեկույցներում տեղ գտած գնահատականներն ու առաջարկները:

Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի (GRETA) կողմից 2022թ. մայիսի 31-ին Հայաստանի վերաբերյալ հրապարակված երրորդ զեկույցի (առաջինը հրապարակվել է 2012թ.-ի սեպտեմբերի 21-ին, երկրորդը՝ 2017թ.-ի մարտի 20-ին) համաձայն, վերջին զեկույցից ի վեր Հայաստանի իշխանությունները շարունակել են բարեփոխել թրաֆիքինգի դեմ պայքարի օրենսդրությունը և քաղաքականությունը, օրենսդրական փոփոխություններից հիշատակվել են 2021թ.-ին քրեական, քրեական դատավարության և աշխատանքային օրենսգրքերում կատարված փոփոխությունները: Հաստատվել են թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրեր 2016-2018թթ., ապա նաև 2020-2022 թվականների համար:

Հայաստանը շարունակել է մնալ հիմնականում թրաֆիքինգի ծագման երկիր, բայց երկրում գրանցվել են նաև ինչպես ներքին թրաֆիքինգի, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների շահագործման դեպքեր: Զեկույցը վկայակոչում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալները, որոնց համաձայն՝ 2017թ.-ին գրանցվել է շահագործման 11, 2018թ.-ին՝ 9, 2019թ.-ին՝ 8, 2020թ.-ին՝ 9 դեպք: 2021թ.-ին թրաֆիքինգի զոհերի կտրուկ աճ է գրանցվել՝ հասնելով 31-ի:

ԵԽ զեկույցի համաձայն՝ 2017-2021 թվականների ընթացքում նույնականացվել է թրաֆիքինգի 68 զոհ: Նրանք բոլորն էլ Հայաստանի քաղաքացիներ են, շահագործման են ենթարկվել Հայաստանում: Թրաֆիքինգի զոհերի 2/3-ը կանայք և աղջիկներ են: Նույնականացված զոհերից 35-ը կանայք են, 19-ը՝ երեխաներ, որից՝ 13 տղա և 6 աղջիկ, 14-ը՝

տղամարդիկ: Հանցագործության գերակշռող ձևը եղել է սեռական շահագործումը (34 զոհ), որին հաջորդում են աշխատանքային շահագործումը (23 զոհ), հարկադիր մուրացկանությունը (8 զոհ) և ստրկությունը կամ նման երևույթներ (3 զոհ):

Նույնականացված զոհերի մեծ մասը՝ 55-ը, եղել են Հայաստանի քաղաքացի: Փոքր թվով Հայաստանցիներ թրաֆիքինգի են ենթարկվել այլ երկրներում՝ 2-ական զոհ գրանցվել է Կիպրոսում, Ռուսաստանում, Արաբական Միացյալ Էմիրություններում, 1-ական զոհ՝ Վրաստանում ու Թուրքիայում: 5 օտարերկրացի էլ աշխատանքային շահագործման է ենթարկվել Հայաստանում: 2018թ.-ին գրանցվել է Հնդկաստանի 5 քաղաքացու (արական սեռի) շահագործման, 2019թ.-ին՝ Իրանցի 1 տղամարդու շահագործման դեպք: Հայաստանում ապաստան հայցողների շրջանում թրաֆիքինգի զոհեր չեն գրանցվել:

2018-2021թթ. ժամանակահատվածում մարդկանց թրաֆիքինգի հատկանիշներով Հայաստանում հարուցվել է ընդհանուր թվով 30 քրեական գործ: Նույն ժամանակահատվածում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի հանձնաժողովի կողմից նույնացվել և աջակցություն է ստացել 56 ՀՀ քաղաքացի:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից պատվիրակված ծառայության միջոցով 2020 թվականից սկսած իրականացվում է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագիրը: Աջակցության փաթեթը ներառում է կացարանի տրամադրում, բնաիրային օգնություն, անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում, բժշկական օգնություն և սպասարկում, իրավաբանական, հոգեբանական և խորհրդատվական օգնություն, խնամքի տրամադրում, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, թարգմանչական ծառայությունների մատուցում, հիմնական կրթության ապահովում:

Ծառայությունը մատուցող որակավորված կազմակերպությունն ընտրվում է մրցութային կարգով և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության հետ կնքվում է պայմանագիր, որի շրջանակում հավանական զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին, ինչպես նաև ռիսկի խմբում գտնվող անձանց տրամադրվում են աջակցության բոլոր օրենքով նախատեսված տեսակները: Կազմակերպությունը պարտավորվում է ունենալ նաև որակավորված մասնագետներ, օրինակ հոգեբան, բուժքույր, սոցիալական աշխատող, իրավաբան-փաստաբան, որոնք մասնագիտացած են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում:

Բացի այդ, օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջնորդության հիման վրա զոհին/հատուկ կատեգորիայի զոհին տրամադրվում է նաև միանվագ դրամական աջակցություն՝ 250,000 ՀՀ դրամի չափով:

Գործընկեր «Ամքոր» բարեգործական կազմակերպության հետ համատեղ ԱՍՀՆ-ն 2021-ին կազակերպել է թրաֆիքինգի և շահագործման երևույթի և դրա կանխարգելման ուղիների վերաբերյալ իրազեկում-դասընթացներ՝ նախարարության ենթակայությամբ գործող Երեխայի խնամքի հաստատությունների աշխատակիցների, Միասնական սոցիալական ծառայության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների, Երևանի թվով 12 խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատակիցների և Երեխայի խնամքի հաստատությունների 14-18 տարեկան երեխաների և նրանց ծնողների համար:

2021-ին ՀՀ ԱՍՀՆ-ն և Վորլդ Վիժն Հայաստանը համագործակցության հուշագիր են ստորագրել «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակում: Հուշագրի նպատակն է կողմերի ջանքերի և ռեսուրսների համատեղմամբ խթանել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության ոլորտի օրենսդրության ներդաշնակեցումն ու կատարելագործումը, նոր ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրումը և հզորացումը, պետական իրավասու մարմինների ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացումն ու կատարելագործումը, ինչպես նաև իրականացնել աշխատանքներ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց վերաբերյալ տվյալների էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ: Հուշագրի շրջանակներում պատրաստվել է «Սոցիալական աշխատանքը թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ. կանխարգելում, միջամտություն և վերականգնում» ձեռնարկը, որը նախատեսված է սոցիալական աշխատողների վերապատրաստման համար, ինչպես նաև իրականացվել են վերապատրաստումներ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատակիցների և համայնքային սոցիալական աշխատողների շրջանում:

ԲԱԺԻՆ Բ

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի հրապարակումների համաձայն, դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների ծավալը 2018թ.-ին՝ 3% նվազում, իսկ 2019թ.-ին՝ 3% աճ գրանցելով 2017-2019թթ. գրեթե չի փոխվել՝ կազմելով տարեկան միջինում մոտ 1.48 միլիարդ ԱՄՆ դոլար: Թեև, ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված, 2020թ.-ին արձանագրվել է ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների ծավալի զգալի (մոտ 12%) կրճատում, 2021թ.-ին ծավալը ոչ միայն վերականգնվել է, այլև հասել 1.56 միլիարդ ԱՄՆ դոլարի (2021թ.-ի ՀՆԱ-ի 11.2%)՝ մոտ 4%-ով գերազանցելով 2017թ.-ի ցուցանիշը: Հաշվի առնելով 2017-2021թթ. միգրացիոն ցուցանիշների դինամիկան (մասնավորապես էմիգրացիայի տեմպի նվազում 2018-2020թթ., այնուհետև աճ՝ 2021թ.), այս բոլոր միտումները միանգամայն բացատրելի են:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների կառուցվածքի տեսանկյունից հատկանշական է, որ 2020-2021թթ. (և հատկապես 2020թ.-ին), դրամական փոխանցումների ընդհանուր ծավալում միգրանտ աշխատողների զուտ աշխատավարձն ու որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքի դիմաց ստացված զուտ եկամուտները զգալիորեն նվազել են, փոխարենը՝ էականորեն ավելացել անձնական տրանսֆերտները:

Դեպի ՀՀ 2017-2021թթ. ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների կառուցվածքն ու ծավալները (միլիոն ԱՄՆ դոլար)



ՀՀ կենտրոնական բանկ

Թեև ՀՀ կենտրոնական բանկը տվյալներ չի հրապարակում դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների աշխարհագրության մասին, այդ մասին որոշակի պատկերացում կարելի է ստանալ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումների աշխարհագրությունն ուսումնասիրելով, որը թեև փոխանցումների ավելի լայն շրջանակ է ընդգրկում, ըստ փորձագիտական գնահատականների, կարող է օգտակար լինել ընդհանուր միտումները հասկանալու համար:

Այս տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ 2017-2021թթ. ժամանակահատվածում տարեց տարի կայուն նվազել է դրամական փոխանցումների ընդհանուր ծավալում Ռուսաստանից Հայաստան փոխանցումների մասնաբաժինը, փոխարենը կայուն աճել ԱՄՆ-ից փոխանցումների մասնաբաժինը: Հատկանշական է նաև, որ այլ երկրներից փոխանցումների կշիռը նույն ժամանակահատվածում գրեթե չի փոխվել:

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումներն ըստ երկրների



ՀՀ կենտրոնական բանկ

Արտերկրից ստացված տրանսֆերտների և դրանց օգտագործման մասին լրացուցիչ տեղեկություններ է տալիս ՀՀ վիճակագրական կոմիտեի ՏՏԿԱՀ-ը: Ըստ հետազոտության 2017թ., 2019թ. և 2020թ. գնահատականների, եթե 2017թ-ին արտերկրից տրանսֆերտներ էր ստացել շուրջ 261,500 մարդ, ապա 2019թ.-ին՝ արդեն 127,000, իսկ 2020թ.-ին՝ ընդամենը 87,500: Միաժամանակ, 2017թ.-ին Ռուսաստանից ստացվել էր տրանսֆերտների 80.3%-ը, 2019թ.-ին՝ 73.7%-ը, իսկ 2020թ.-ին՝ ընդամենը 65%-ը:

Արտերկրից ստացված դրամական փոխանցումների առումով ՏՏԿԱՀ կարևորագույն բացահայտումներից մեկն այն է, որ ստացված դրամական փոխանցումները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են տնային տնտեսությունների ընթացիկ սպառման նպատակով (2017թ.-ին՝ 99%, 2019թ.-ին՝ 88%, 2020թ.-ին՝ 92%) և շատ փոքր մասն է ուղղվում կապիտալ ներդրումներին կամ ձեռնարկատիրությանը:

EU4IMPACT ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳԻՐ

Դրամական փոխանցումներն ի նպաստ զարգացման օգտագործելու խրախուսման ծրագրերը կարևոր առաջնահերթություն են միգրացիայի դրական ազդեցության ուժեղացման տեսանկյունից:

Այդպիսի ծրագրերից է 2020թ.-ին մեկնարկած «**EU4IMPACT Հայաստան**»-ը, որի ընդհանուր նպատակն է նպաստել աշխատանքային միգրանտների, վերադարձողների և նրանց ընտանիքների անդամների հզորացմանը՝ դրամական փոխանցումների մոբիլիզացման միջոցով՝ ներդրումներ կատարելով Հայաստանում տեղական զարգացման և աշխատատեղերի ստեղծման համար: Ծրագիրը (տևողությունը՝ 2020-2024թթ.) ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի կողմից:

Ծրագիրը տրամադրում է 2,000-ից մինչև 10,000 եվրո դրամաշնորհներ բիզնեսի ստեղծման համար, ինչպես նաև օգնում է ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ բիզնեսի պատշաճ, գրագետ և պրոֆեսիոնալ կառավարման համար: Ծրագրի դիմորդները պետք է պատրաստ լինեն և համաձայնեն կատարել իրենց սեփական ներդրումը պահանջվող դրամաշնորհի չափով:

Առաջին փուլում կազմակերպված դասընթացների արդյունքում մասնակիցները մշակել են իրենց բիզնես մոդելները: Ներկայացված բիզնես մոդելների հիման վրա անցկացված մրցույթում 125 մասնակիցներից ընտրվել են 80-ը, որոնք շարունակելու են մասնակցել իրիս բիզնես հիմնադրամի կողմից կազմակերպված առցանց դասընթացներին: Դասընթացների թեմաներն են՝ մարքեթինգ, բիզնես գործառնություն, իրավական հարցեր, ֆինանսներ և հաշվապահություն: Դասընթացները կտևեն մինչև 2022թ-ի ապրիլի 25-ը, որից հետո մասնակցիները կազմելու են իրենց բիզնես ծրագրերը և ներկայացնեն ժյուրիին:

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հայրենադարձությունը և Հայաստանում հայրենադարձների արդյունավետ ինտեգրումը պետական քաղաքականության առաջնահերթություն է, որը միտված է ՀՀ ժողովրդագրական և անվտանգային իրավիճակի բարելավմանը, սփյուռքի մասնագիտական ներուժի ու ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը, ՀՀ արդիականացմանն ու առաջադիմության ապահովմանը, արտակարգ իրավիճակներում հայտնված ու վտանգված համայնքներից հայրենակիցների վերադարձը ապահովելուն և այլ ռազմավարական խնդիրներին:

2018-2021թթ. ժամանակահատվածում՝ հայրենադարձության աճող տեմպին զուգահեռ զգալիորեն ակտիվացել են նաև պետության ջանքերը՝ խրախուսելու սփյուռքի մասնագիտական, տեխնոլոգիական և ֆինանսական պոտենցիալը Հայաստանի զարգացմանն ուղղելուն:

Այսպես, ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը 2020 թվականից իրականացնում է **«iԳործ»** ծրագիրը, որն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից: Ծրագիրը հրավիրում է սփյուռքահայ մասնագետներին աշխատելու Հայաստանի Հանրապետության հանրային ոլորտում և կառավարությունում: iGorts fellowship ծրագիրը 12-ամսյա կրթաթոշակ է, որը թույլ է տալիս 50 հայ մասնագետների ամբողջ աշխարհից աշխատել Հայաստանի կառավարությունում: Ծրագրի երկու հիմնական նպատակներն են Հայաստանի պետական հաստատությունների կատարելագործումն ու զարգացումը, ինչպես նաև մասնագիտական հայրենադարձության խթանումը: Սփյուռքի մասնագետները տեղավորվում են տարբեր ոլորտների պետական գերատեսչություններում, որոնք իրենց փորձի կարիք ունեն և նպաստում են պետական հաստատության շրջանակներում ծրագրերի և քաղաքականության բարելավմանը և զարգացմանը: Իրենց գործունեության 12 ամիսների ընթացքում նրանք աշխատում են տարբեր նախագծերի վրա, առաջարկում են իրենց գիտելիքները միջազգային լավագույն փորձի մասին և խորհուրդներ տալիս, թե ինչպես բարելավել կառավարման համակարգերը:

Ըստ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, առաջին տարվա մասնակիցների ավելի քան 70%-ը մեկամյա ծրագրի ավարտից հետո մնացել է Հայաստանում:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացվող **«ներՈւժ»** ծրագիրը, որը մեկնարկել է 2018 թվականին, նպաստում է սփյուռքի տեխնոլոգիական և գործարար տաղանդի վերադարձին հայրենիք:

Ծրագիրը նպատակաուղղված է հարստացնելու Հայաստանի սթարթափ էկոհամակարգը՝ խթանելով սփյուռքից նորարար, ընդարձակվող տեխնոլոգիական սթարթափերի ներհոսքը և օգտագործելով սփյուռքի միջկոնտինենտալ ցանցը՝ Հայաստանը ներկայացնել որպես համաշխարհային շուկայում ազդեցիկ տեխնոլոգիաների տեղակայման և ընդլայնման դարպաս: «ՆերՈւժ» տեխնոլոգիական ծրագիրը կոչված է սփյուռքի ձեռնարկատերերին ծանոթացնելու Հայաստանում սթարթափ հիմնելու հնարավորություններին և երկրի գործարար պրակտիկային, ինչպես նաև տեղական էկոհամակարգին:

Մրցույթի հաղթողները՝ պայմանով, որ ներկայացնելու են բիզնես պլան, իրենց ընկերությունը գրանցելու են Հայաստանում և բացելու են տեղական կորպորատիվ բանկային հաշիվ, հրավիրվում են հայրենադարձվելու Հայաստան և ստանալու 15,000-ից 30,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ֆինանսական աջակցություն, ինչպես նաև մենթորություն իրենց բիզնեսը զարգացնելու համար:

Սփյուռքի ներուժի օգտագործման և հայրենադարձության խրախուսման ուղղությամբ իրականացվող այլ նախագծերին կարելի է ծանոթանալ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կայքեջում:

ԲԱԺԻՆ Գ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2022Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հայաստանում միգրացիայի կառավարումն ապակենտրոնացված է և միգրացիոն լիազորությունները բաժանված են տարբեր պետական մարմինների միջև: Միգրացիոն ոլորտում լիազորություններ ունեն ՀՀ ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Արտաքին գործերի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, իսկ հիմնական պատասխանատու մարմին հանդիսացող միգրացիոն ծառայությունը գործում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ենթակայությամբ:

Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը



ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառավարության 2020թ.-ի ապրիլի 23-ի N 638-լ որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը: Ոստիկանության բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը Ներքին գործերի նախարարության ստեղծումն է, ինչը թույլ կտա բարձրացնել համակարգի արդյունավետությունը և ապահովել ոլորտի թե՛ խորհրդարանական, և թե՛ քաղաքացիական վերահսկողությունը:

Բարեփոխումների արդյունքում ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայությունը և Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը կմիավորվեն, ձևավորելով Ներքին գործերի նախարարության ենթակայությամբ գործող նոր մարմին՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը: Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը հետևյալ կերպ է հիմնավորում միգրացիայի կառավարման նոր մոդելի անհրաժեշտությունը:

Առաջատար երկրների ու անդրսահմանյան կառույցների պրակտիկան ցույց է տալիս, որ միգրացիոն ծառայությունները լավագույնս գործարկվում են համապատասխան ներքին գործերի հարցերով զբաղվող կառույցներում (Ավստրալիայի պարագայում՝ Department of Home Affairs, ԱՄՆ պարագայում՝ Department of Homeland Security, ԵՄ պարագայում՝ DG for Migration and Home Affairs)՝ հաշվի առնելով միգրացիոն գործառույթների բնույթն ու մատուցվող ծառայությունների տեսակները (օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման կազմակերպում, ռեադմիսիոն միջպետական համաձայնագրերով սահմանված հանձնառությունների կատարման ապահովում և այլն):

Հայաստանում միգրացիոն գործառույթների իրականացման անարդյունավետության հիմնական պատճառն այն է, որ դրա էական բաղադրիչներից մեկը՝ քաղաքացիներին, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ծառայությունների մատուցումը բաշխված է տարբեր մարմինների միջև, և շահառու խմբերը ստիպված են լինում գործ ունենալ բազմաթիվ գերատեսչությունների հետ մեկ խնդիր լուծելու համար: Արդյունքում նվազում է միգրացիայի ոլորտի կառավարման արդյունավետությունը և ինտեգրվածությունը, բարդանում է գործողությունների համակարգումը, դանդաղում են հանրային ծառայությունների մատուցման գործընթացները, մեծանում է գործողությունների կրկնակի իրականացումը, առաջանում են տվյալների փոխանցելիության և տվյալների շտեմարանների սինխրոնացման հարցեր, ինչպես նաև անձերի և դեպքերի նույնականացման հետ կապված բարդություններ:

Միգրացիոն իրավիճակի շարունակական փոփոխությունը և միգրացիոն քաղաքականության գերակայությունների վերագնահատումն այսօր արդիական են դարձնում միգրացիայի կառավարման պետական համակարգի բարեփոխումների և արդյունավետության բարձրացման խնդիրը: Նշված բացերի հաղթահարման և միգրացիայի կառավարման արդյունավետության և համապարփակության մեծացման նպատակով միգրացիայի կառավարումը նպատակահարմար է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության հետ միավորմամբ կենտրոնացնել ոլորտի քաղաքականություն մշակող մեկ կառույցի ներքո քաղաքացիական բնույթի ծառայության ձևով՝ ինտեգրված մոտեցում ցուցաբերելով միգրացիոն շղթայի բոլոր բաղադրիչների կառավարմանը:

2020թ.-ին Միգրացիոն ծառայությունը ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ աշխատանքներ է տարել Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին և հարակից օրենքների նախագծերի փաթեթի մշակման ուղղությամբ, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ համատեղ մշակվել են նոր ծառայության կանոնադրության, աշխատակիցների վերապատրաստման ծրագրի նախագծերը, ծառայության կողմից իրականացվելիք գործառույթների թվայնացման մոդուլները:

Ներքին գործերի նախարարության ձևավորումն ըստ Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի նախատեսված էր ավարտին հասցնել 2021թ.-ին, սակայն ՔՈՎԻԴ-19 համավարակի և 2020թ. 44-օրյա պատերազմի հետևանքով գործընթացը որոշակիորեն դանդաղել է, և ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրում նախարարության ձևավորումը նախատեսվել է 2023թ. մարտին:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018-2021ԹԹ. ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 20-ի N801-լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը:

Միգրացիայի կառավարման ոլորտում սահմանների կառավարման, փաստաթղթային անվտանգության, վերադարձի ու վերաինտեգրման, մարդկանց թրաֆիքինգի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ուղղություններով Հայեցակարգով նախատեսված բարեփոխումները կնպաստեն Եվրոպական միության հետ կապերի ամրապնդմանը և ճանապարհ կհարթեն վիզաների ազատականացման շուրջ բանակցությունների համար: Նախատեսվող բարեփոխումները նաև թույլ կտան ամրապնդել համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության շրջանակում՝ դյուրացնելով աշխատուժի շարժունակությունը և նպաստելով տնտեսական զարգացմանը:

Ըստ Հայեցակարգի, միգրացիայի կառավարման գործում ՀՀ կառավարությունն առաջնորդվում է երեք **հիմնարար սկզբունքներով**՝ համակառավարում, համագործակցություն և փաստահենություն:

Միգրացիայի պետական կառավարման քաղաքականության **արժեքներն են** ազգային անվտանգությունն ու հանրային համերաշխությունը, միգրանտների բոլոր խմբերի իրավունքներն ու արժանապատվությունը, մշակութային բազմազանությունը և քաղաքացիական արժեքների հաշտեցումը, շարժունակությունը ու միջազգային մասնակցությունը:

Հայեցակարգի **թիրախային խմբերն են** օտարերկրացիները, վերադարձողները, հայրենադարձները, ներքին տեղահանված անձինք, ապաստան հայցողները, փախստականները, հարկադիր տեղահանված անձինք, և էմիգրանտները:

Ելնելով միգրացիոն ոլորտի իրավիճակից և առկա հիմնախնդիրներից, ինչպես նաև միգրացիոն նոր հոսքերի վերաբերյալ կանխատեսումներից, հայեցակարգը սահմանում է **9 ռազմավարական նպատակ**, յուրաքանչյուրի համար նախանշելով միգրացիայի կառավարման մի շարք ուղղություններ, մասնավորապես.

1 Միգրացիայի կառավարման և Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման և հայրենադարձության քաղաքականությունների միջև փոխառնչակցությունների մեծացում

Վերադարձի և հայրենադարձության խրախուսում

Իմիգրացիոն անհրաժեշտ հոսքերի ծավալի և կառուցվածքի գնահատում և նպատակահարմար ներհոսքի խթանում

Արտահոսքի ազդեցության գնահատում և նպատակային խմբերի արտահոսքի կրճատում

2 Անկանոն և անօրինական միգրացիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում

Անօրինական սահմանահատումների կանխարգելում

Օտարերկրացիների կացության հաշվառման և կանոնակարգման համակարգերի կատարելագործում

Անկանոն միգրացիայի դեպքերի արդյունավետ և մարդասիրական կառավարում

Աշխատուժի ներգրավմամբ զբաղվող մասնավոր կազմակերպությունների վերահսկողության ուժեղացում

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքար

ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կրճատում

Հայաստանում վիզաների և անձնագրերի կեղծման դեմ պայքար

3 Սահմանների, մուտքի, ելքի և օտարերկրացիների կացության կառավարման արդյունավետության բարձրացում

Սահմանին անձանց նույնականացման համակարգերի բարեփոխում

Անձանց՝ սահմանային անցակետերից այլ կառույցների իրավասությանը հանձնելու գործընթացի բարեփոխում

Միգրացիոն հոսքերի կառավարման տեսանկունից ՍԷԿՏ համակարգի հնարավորությունների վերագնահատում և դրանց լիարժեք օգտագործում

Սահմանապահ ծառայության աշխատակիցների կարողությունների զարգացում

Վիզային քաղաքականության վերանայման գործընթացում միգրացիայի կառավարման օրակարգի ներմուծում

ՀՀ մուտքի վիզաների տրամադրման և երկարաձգման քաղաքականության բարեփոխում

Կացության տրամադրման համակարգի բարելավում

Տեղեկատվության հասանելիության մեծացում

Հայաստանում հետընդունման և վերադարձի գործընթացների բարելավում

Արտաքսման գործընթացի բարելավում

4 Միգրանտների տարբեր խմբերի իրավունքների և շահերի պաշտպանության բարելավում, միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործում

Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության բարելավում

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական և առողջապահական պաշտպանություն արտերկրում

Հայաստանի Հանրապետությունում միգրանտների իրավունքների պաշտպանության բարելավում

Հայաստանում օտարերկրացիների աշխատանքային գործունեության առկա կարգավորումների բարելավում

Ներքին տեղահանված անձանց և հարկադիր տեղահանված անձանց (որոնք չունեն փախստականի կարգավիճակի համար դիմելու իրավական բնութագրիչներ, մասնավորապես՝ Սիրիայից Հայաստան տեղափոխված ՀՀ քաղաքացիներ, Արցախի Հանրապետությունից հարկադիր տեղափոխվածներ) իրավական և սոցիալական պաշտպանություն

Միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործում

Ապաստանի ընթացակարգերի որակի վերահսկման և արդյունավետության ուժեղացում

5 Հայաստանում օտարերկրացիների ինտեգրման և վերադարձողների վերաինտեգրման կազմակերպման բարեփոխում, ինչպես նաև Հայաստանում օտարերկրացիների ընդունման միջավայրի բարելավում

Կրթության, առողջապահության, սոցիալական աջակցության հասանելիության մեծացում և իրավունքների պաշտպանություն

Մշակութային ինտեգրում

Քաղաքացիական ինտեգրման բարեփոխում

Աջակցություն զբաղվածությանը և տնտեսական ներգրավվածությանը

Հայաստանում ընդունող և հյուրընկալ միջավայրի ստեղծում

6 Հայաստանի կայուն մարդկային զարգացման վրա միգրացիայի ազդեցության մեծացում

Ուղեղների արտահոսքի կանխում և նպատակային խմբերի արտահոսքի կրճատում

Կրթության և փորձի փոխանակման նպատակով միգրացիայի խրախուսում

Աշխատանքային միգրացիայի կրճատում

Միգրացիայի բացասական ազդեցության նվազեցում և ռիսկերի կրճատում, ավանդական ձևերին և ուղղություններին (Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներ) այլընտրանքների ստեղծում

Միգրանտների և սփյուռքի մտավոր և տնտեսական ներուժի հայտնաբերում և այդ ներուժի կիրառման մեխանիզմների ներդրում Հայաստանի կայուն մարդկային զարգացման գործում

Արտերկրից ստացվող դրամական փոխանցումների ուղղում դեպի զարգացում

Արտերկրում հայ համայնքների հետ հարաբերությունների սերտացում Միջազգային մասնակցության խթանում

7 Միգրացիոն ճգնաժամերին արձագանքելու պատրաստվածության մեծացում

Միգրացիայի ճգնաժամային կառավարման համակարգի ստեղծում

Սահմանների ճգնաժամային կառավարում

Միջազգային պաշտպանության ճկուն համակարգերի ստեղծում

Վիճակագրության վարման, մշտադիտարկման և տեղեկատվության երկկողմանի փոխանցման մեխանիզմների ստեղծում

Տեղահանված անձանց փաստաթղթավորման, հաշվառման և ուղղորդման համակարգերի ստեղծում

Ենթակառուցվածքների ապահովում

Անձանց անվտանգության ապահովման և ճգնաժամային աջակցության ծրագրերի և մեխանիզմների ստեղծում

Միջազգային տեղաշարժի սահմանափակումների կառավարում

Զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման շուրջ միջազգային համագործակցության ընդլայնում

Կայուն դրամական միջոցների նախատեսում

8 Միգրացիայի կառավարման ոլորտում միջազգային և ներպետական համագործակցության ընդլայնում

Տարածաշրջանային և գլոբալ համագործակցության ընդլայնում

Երկկողմ համագործակցության սերտացում

Պետական կառույցների միջև համագործակցության ընդլայնում

Միջազգային կազմակերպությունների և ՀՀ քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցության հզորացում

Միջազգային հարթակներում Հայաստանի դերի մեծացում

9 Միգրացիայի կառավարման համակարգվածության, միասնականության և արդյունավետության բարձրացում

Միգրացիայի համապարփակ կառավարման ինստիտուցիոնալ հենքի ստեղծում

Միգրացիոն քաղաքականության ձևավորման և իրագործման փաստահենքության մեծացում

Միգրացիոն քաղաքականության արդյունքների և ազդեցության գնահատման արդյունավետության բարձրացում

Միգրանտների տարբեր խմբերին տրամադրվող հանրային ծառայությունների որակի բարելավումը և հասանելիության մեծացում

Միգրացիայի կառավարման կարողությունների զարգացում

Ներքին միգրացիայի ներմուծում միգրացիայի կառավարման քաղաքականության օրակարգ

Դրամական կայուն միջոցների ապահովման մեխանիզմների ստեղծում

ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված է իրենից բխող չորս ծրագրերի մշակում՝

- ✓ Ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման,
- ✓ Միգրացիոն հոսքերի կառավարման,
- ✓ Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման,
- ✓ Հայրենադարձության խթանման:

Հայաստանի հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ **ինտեգրման և վերաինտեգրման** խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագիծը մշակվել է 2021թ.-ին: Այս համապարփակ փաստաթուղթն անդրադառնում է ինտեգրման և վերաինտեգրման ձևակերպմանը և չափումներին, ինտեգրման և վերաինտեգրման քաղաքականության սկզբունքներին, թիրախային խմբերին և նրանց հիմնական կարիքներին, ինտեգրման և վերաինտեգրման քաղաքականության ռազմավարական նպատակներին, քաղաքականության հիմնական դերակատարներին, նրանց միջև համագործակցության ձևաչափին և արդյունքների գնահատման մեխանիզմներին, ինչպես նաև ռազմավարության և գործողությունների ծրագրերի իրականացման ֆինանսական միջոցներին: Ռազմավարության նախագիծը 2021թ. դեկտեմբերին ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:

Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագրի մշակումը վերապահված է նոր ստեղծվող ներքին գործերի նախարարությանը:

Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագրի նախագիծը վարչապետի աշխատակազմ է ներկայացվելու 2022թ. մարտին: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է, որ կստեղծվեն միգրացիոն ճգնաժամերին պատշաճ արձագանքման պայմանները, ինչպես նաև կբարձրանա հարկադիր միգրացիոն հոսքերի կառավարման ոլորտում շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմինների միջև համագործակցության մակարդակը, կապահովվի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների համակարգված գործունեությունը: Արդյունքում կմեծանա հարկադիր միգրացիոն հոսքերի կառավարման արդյունավետությունը:

Հայրենադարձության ծրագրի մշակումը լիազորված է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակին և Միգրացիոն ծառայությանը: Ծրագրի նախագիծը պատրաստ կլինի 2022թ. սեպտեմբերին:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 30-ի N670-Ի որոշմամբ հաստատվել է «Օտարերկրացիներին **աշխատանքի թույլտվության** տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագիրը», որի շրջանակներում մշակվել և 2021թ. հաստատվել են հետևյալ իրավական ակտերը.

- ✓ «Հայաստանի Հանրապետության օրենքը «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
- ✓ «Հայաստանի Հանրապետության օրենքը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
- ✓ «Հայաստանի Հանրապետության օրենքը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»:

Առաջարկվող փոփոխությունները հնարավորություն են ստեղծում ունենալ ՀՀ ժամանող աշխատանքային միգրանտների ամբողջական պատկերը, ինչը կարևոր է ինչպես անկանոն միգրացիայի կանխարգելման, այնպես էլ այդ անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Հաստատված օրենսդրական փոփոխությունների արդյունքում.

- ✓ 2022թ. հունվարի 1-ից գործարկվելու է օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակ, որը հնարավորություն է տալու միաժամանակյա հասանելիություն ապահովել աշխատանքի թույլտվության գործընթացում ներառված բոլոր պետական մարմինների համար, կրճատելով գործընթացի վրա ծախսվող ժամանակը և բարելավելով վարչարարությունը,
- ✓ պարզեցվում է աշխատանքի թույլտվության տրամադրման ընթացակարգը: Նախկինում աշխատանքի թույլտվությունը տրամադրվում էր գործատուին, որի հիման վրա աշխատողը ստանում էր կացության կարգավիճակ: Նոր կարգավորումներով աշխատանքի թույլտվությունն իրենից ներկայացնում է էլեկտրոնային հարթակում տրվող հաստատում, որի հիմքով օտարերկրացին ստանում է ժամանակավոր կացության կարգավիճակ: Արդյունքում կրճատվում է վարչարարությունը, թեթևանում թե՛ գործատուի և թե՛ օտարերկրացու բեռը,
- ✓ հստակեցվում է ԵԱՏՄ մասին պայմանագրով նախատեսված ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիների աշխատանքային գործունեությունը կարգավորող նորմերի կիրարկումը,
- ✓ հստակեցվում են աշխատանքի թույտվության տրամադրելու հարցում պետական լիազոր մարմնի, ինչպես նաև գործընթացում ներառված մյուս մարմինների գործառույթները,
- ✓ հնարավորություն է ստեղծվում հավաքագրել ամբողջական վիճակագրական տվյալներ, այդ թվում առանց աշխատանքի թույլտվության ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ:

2021թ. հաստատված օրենսդրական բարեփոխումների մեկ այլ փաթեթ միտված էր ՀՀ-ում **ապաստան հայցողների իրավունքներին**, մասնավորապես օրենքով նախատեսված կարգով անազատության մեջ հայտնված անձանց ՀՀ-ում ապաստան ստանալու իրավունքին վերաբերող նորմերին:

«Փախստականների եվ ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, Վարչական դատավարության օրենսգրքում և Քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով հստակեցվել է օրենքով սահմանված կարգով ազատությունը սահմանափակված օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի համար դիմելու, այդ թվում՝ օրենքով նախատեսված իրավասու մարմնի կողմից կայացված բացասական որոշումը դատական կարգով բողոքարկելու ընթացակարգը, սահմանվել են հստակ և կանխատեսելի ժամկետներ՝ ապահովելու համար իրավական որոշակիությունը, քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունը, քրեադատավարական հարաբերությունների բնականոն ընթացքը և բացառելով իրավունքի չարաշահման հնարավորությունը:

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2018-2021թթ. Հայաստանը շարունակել է զարգացնել և ընդլայնել միգրացիայի ոլորտում բազմակողմ և երկկողմ ձևաչափերով միջազգային համագործակցությունը, հատկապես ռեադմիսիայի, վերադարձի և վերաինտեգրման, և միգրացիայի կառավարման ոլորտներում: ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված՝ 2020թ.-ից միջազգային համագործակցության օրակարգում զգալիորեն ավելացել են ճգնաժամային իրավիճակներում միգրացիայի կառավարման քննարկումները, որոնց Հայաստանը ևս ակտիվորեն մասնակցել է:

2018-2021թթ. միգրացիայի ոլորտում միջազգային համագործակցության նշանակալի իրադարձություններն ու ձեռքբերումներն ամփոփված են ստորև:

2018

Հունվարի 23-ին Բրյուսելում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Շարժունակության շուրջ գործընկերության երկրորդ բարձրաստիճան հանդիպումը:

Փետրվարի 22-ին ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր ՀՀ միգրացիոն ծառայության և Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի միջև: Հուշագրի շրջանակներում Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամն իր՝ «Մեկ պատուհան» ծառայության գործունեության միջոցով տեղեկություններ է տրամադրում ՀՀ վերադարձող միգրանտներին վերաինտեգրմանն առնչվող հարցերի, այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի, ներգրավված մարմինների, ինչպես նաև հատկացվող օգնության տեսակների վերաբերյալ:

Համագործակցություն է հաստատվել ԵՄ սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության (FRONTEX) հետ: Հայկական պատվիրակությունը հուլիսին մասնակցել է ճանաչողական այցին՝ Վարշավայում գտնվող ԵՄ Սահմանային և առափնյա պահպանության Եվրոպական գործակալության (FRONTEX) գլխամասային գրասենյակ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ռեադմիսիոն գործառույթներ իրականացնող աշխատակիցների համար FRONTEX-ի կողմից վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ:

Նոյեմբերի 8-ին մեկնարկեց Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN) Հայաստանյան ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության՝ Ապաստանի, միգրացիայի և ինտեգրման հիմնադրամի (AMIF) կողմից: Ծրագիրը 15 անդամ երկրից բաղկացած կոնսորցիումի՝ Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի նախաձեռնությունն է, որի առաջատար կազմակերպությունը Նիդեռլանդների Թագավորության արդարադատության և անվտանգության նախարարության հայրենադարձության և վերադարձի ծառայությունն է: Ծրագրի ընդհանուր նպատակը միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացումն է, ինչպես նաև ԵՄ անդամ երկրներից կամավոր և/կամ հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիներին սոցիալ-տնտեսական վերաինտեգրման աջակցության տրամադրումը: Փոխըմբռնման հուշագիր է կնքվել ՀՀ միգրացիոն ծառայության և միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի Հայաստանյան գրասենյակի միջև:

ՄԱԿ-ի հովանու ներքո ընդունվեց «Միգրացիայի գլոբալ հռչակագիրը» Մարոկկոյի Թագավորության Մարաքեշ քաղաքում հրավիրված անվտանգ, կանոնավոր և ապահով միգրացիայի գլոբալ հռչակագրի բարձր մակարդակի միջկառավարական համաժողովի ընթացքում: 150 երկրների պատվիրակությունների թվում է նաև Հայաստանը:

2019

Սեպտեմբերի 26-27-ին վերադարձի և հետընդունման ոլորտում ներգրավված աշխատակիցների համար FRONTEX-ի կողմից կազմակերպվել է կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստում, ինչպես նաև, ԵՄ-ի՝ վերադարձի ոլորտում լավագույն փորձիե վերաբերյալ սեմինար:

Ժնևում կայացավ Փախստականների հարցերով առաջին գլոբալ ֆորումը, որը կազմակերպվել է 2018թ-ի դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից հաստատված Փախստականների համաշխարհային հռչակագրի շրջանակում: Հայաստանը ներկայացնում էր ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորությամբ հայկական պատվիրակությունը:

2019թ-ի ընթացքում հայկական կողմի նախաձեռնությամբ այցելություններ են իրականացվել առանցքային կարևորություն ներկայացնող եմ երկրներ՝ ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության շուրջ մեկնարկի խթանման բանակցությունների նպատակով: Այսպես, հայկական պատվիրակությունը պաշտոնական այցով եղել է Գերմանիայում, Ավստրիայում, Բելգիայում, Նիդերլանդներում, Լյուքսեմբուրգում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Չեխիայում, Շվեդիայում և Ֆինլանդիայում:

Ժնևում տեղի ունեցավ, Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում ապաստանի համակարգերի որակի նախաձեռնությանե խորագրով առաջին բարձրաստիճան համաժողովը: Այն համախմբել էր ծրագրի վեց երկրների համապատասխան նախարարությունների և ապաստանի ոլորտի շահագրգիռ կողմերին ՄԱԿ ՓԳՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ մեկտեղ, կատարված աշխատանքները գնահատելու, և տարածաշրջանում ապաստանի տրամադրման և փախստականների պաշտպանության ամրապնդմանն ուղղված հետագա քայլերը միասին բացահայտելու նպատակով:

2020

Միգրացիոն ծառայության նախաձեռնությամբ Վիեննայում կայացել է հանդիպում-քննարկում ԵՄ անդամ երկրներում հետընդունման (ռեադմիսիոն) գործառույթներ իրականացնող ՀՀ հյուպատոսների և ԵՄ անդամ երկրների հետընդունման հարցերով պատասխանատու գործընկերների հետ՝ վերադարձի, հետընդունման և վերաինտեգրման տեսական և գործնական հարցերի շուրջ:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հետ համագործակցությամբ «Հայաստանում և Վրաստանում միգրանտների իրավունքների և լավ կառավարման խթանում» (EMERGE) տարածաշրջանային ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ:

2021

2021թ-ին ավարտվեց ՀՀ և ԵՄ և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) վավերացման գործընթացը և մարտի 1-ից այն ամբողջովին ուժի մեջ մտավ: Համաձայնագրի 3-րդ մասի 14 և 15-րդ հոդվածները վերաբերում են «Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությանը, անձանց տեղաշարժին և հետընդունմանը»:

Եվրոպական միգրացիոն ցանցի (ԵՄՑ/EMN) հետ համագործակցության տեսլականը և Հայաստանի՝ դիտորդի կարգավիճակով ցանցին միանալու հնարավորությունը քննարկելու նպատակով կայացել է ԵՄՑ պատվիրակության այցը Հայաստան:

Պաշտոնապես մեկնարկել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ/ICMPD) կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի հզորացման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման» (EU4IMPACT ARMENIA) ծրագիրը:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ/IOM) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանը մասնակցել է ՄՄԿ Միգրացիայի մասին միջազգային երկխոսության (IOM's International Dialogue on Migration/IDM) «Արձագանքելով ճգնաժամերին ՔՈՎԻԴ-19-ի պայմաններում» թեմայով առցանց նիստին, հյուրընկալել է EMERGE ծրագրի «Վերադարձը, վերաինտեգրումը և աշխատանքային միգրացիան նոր կորոնավիրուսային համավարակի համատեքստում» թեմայով տարածաշրջանային երկրորդ թեմատիկ առցանց համաժողովը և մասնակցել ծրագրի համակարգող մարմնի 2-րդ նիստին, ինչես նաև մասնակցել «ՔՈՎԻԴ-19-ի ազդեցությունը սահմանների վրա, միգրացիա և շարժունություն. դասեր քաղելով և պատրաստվելով ապագային» թեմայով ՄՄԿ խորհրդի 112-րդ նիստին:

Հայաստանը մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ/UNHCR) կազմակերպած բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպմանը:

Նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN) բարձրաստիճան պաշտոնյաների 7-րդ կլոր սեղան քննարկումը՝ վերադարձի հարցերի վերաբերյալ:

2018-2021թթ. Հայաստանն իր ստանձնած պարտավորությունների շրջանակներում շարունակել է մասնակցել նաև միգրացիոն ոլորտի միջազգային համագործակցության տարբեր ձևաչափերով նախատեսված պարբերական նիստերին և հանդիպումներին, այդ թվում՝

ՀՀ-ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի իրականացման հարցերով համատեղ կոմիտեի նիստերին (2018թ.՝ Բրյուսել, 2019թ.՝ Երևան, 2020թ.՝ գրավոր փոխանակման ձևաչափով, 2021թ.՝ տեսակապով):

Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ՀՀ-ԵՄ ենթակոմիտեի նիստերին (2018թ.՝ Երևան, 2019թ.՝ Բրյուսել, 2021թ.՝ Երևան):

ԱՊՀ անդամ պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի նիստերին (2018թ.՝ Բիշկեկ, 2019թ.՝ Երևան, 2021թ. փետրվարի 18-ին՝ տեսակապով, 2022թ՝ տեսակապով)

2018թ-ի սեպտեմբերի 20-ին Երևանում կայացել է ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության հարցերով խորհրդատվական կոմիտեի հերթական՝ 6-րդ նիստը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին» 1994թ.-ի հուլիսի 19-ի համաձայնագրի դրույթների իրագործման նպատակով ստեղծված հայ-ռուսական աշխատանքային խմբի հանդիպումներին 2019-ին և 2021-ին:

ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակում 2018թ-ի նոյեմբերի 27-ին կայացել է Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև գործընկերության կոմիտեի առաջին նիստը, 2019թ. դեկտեմբերի 16-ին՝ Բրյուսելում կայացել է երկրորդ նիստը:

Պրահյան գործընթացի շրջանակում բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներին (2018թ.՝ Պրահա, 2019թ.՝ Բուխարեստ , 2021թ.՝ տեսակապով):

Վիեննայի միգրացիոն բարձրաստիճան համաժողովին (2018թ., 2019թ., 2020թ.՝ տեսակապով, 2021թ.), որը Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD/ՄՔՄՄԿ) կողմից կազմակերպվող ամենամյա նշանակալի իրադարձություն է և համախմբում է քաղաքական գործիչներին, բարձրաստիճան պաշտոնյաներին, կառավարության փորձագետներին, ոլորտի մասնագետներին, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ակադեմիական շրջանակների և լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ միգրացիոն քաղաքականության մշակման կարևոր կողմերը քննարկելու նպատակով: